

Ապրիլի յուսիսում

ՑԵԼԵԺՈՆ № 282

Լույս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 26 կիրակի յուլիսի 18 | տասներորդ տարի 1899

Ամառանոցային կեանքից

ՀԻՆ ՈՒՐԱՐՏՈՒՆ (ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԸ) ԵՒ ԱՍՈՐԱ-ԲԱԲԵԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ *)

—

Արպէս զի կարողանար իշխել այս Հովտին և շրջապատող լեռներին, Արգեշտի թագաւորն իր համար աւելի լաւ տեղ ընտրեց, քան թէ Լուխիանինի-Տաշբուրունն էր։ Հարթութեան մէջ համարեա կենդրոնական տեղն էր բռնում Արմաւիրի բլուրը և չընայելով աննշան բարձրութեանը, նրա առջևն էր ողջ Հովիտը, այնպէս որ այնտեղից կարող էր նրան իշխել։ Եթէ մարդ կանգնի բլրի վրայ և շուրջը դիտէ, կզգայ իրան ընդարձակ պարտիզի շքեղ բուսականութեան կենդրոնում, որն երիզաւորուած է Արագածի և Արարատի ձիւնապատ կատարներով, իսկ մեր քննած դարերշրջանում բլրից աւելի գրաւիչ պատկեր էր նկարւում։ Արաքսը, որ հիմա հոսում է չորս վերստ հեռու Արմաւիրից դէպի հարաւ, այն ժամանակ անցնում էր անմիջապէս բլրի ստորոտից, դեռ այժմ էլ նկատելի է գետի ցամաքած հունը։ Փոքրիկ բլուրը բաւական էր իր վրայ ամրոցն ու աշտարակը տեղաւորելու համար, իսկ քաղաքը կարող էր տարածուել բլրի փէշերում։ Որ իրաւի, այդ այդպէս էր, դրան ապացոյց են բլրի և նրա մօտերը գտնուած 10 հատ սեպաձև արձանագրութիւնները։ Ճշմարիտ է, այդ տեղերում ոչ մի արձանագրութիւն չկայ ժայռերի վրայ փորուած և քարերից ամենքն էլ շինութիւնների մասեր են, բայց, ի նկատի ունենալով, որ նրանք բլուրի վրայ եղած շինութիւնների քարից են, գտնուել են միևնոյն տեղում ու խօսում են միայն շինութիւնների մասին, այդ բաները պարզ ցոյց են տալիս, որ նրանք ուրիշ տեղից չեն բերուել, այլ բլրի շինութիւնների մասերից են և կրում են ճարտարապետական հետքեր։

Արմաւիրի արձանագրութիւնները պատկանում են երեք թագաւորի — Արգեշտի I-ին, նրա որդի Սարդուրի II-ին և մէկ հատ Ռուսա II-ին, որ ապրում էր 100 տարի յետոյ, VII-դ դարի 2-դ կիսին։ Այս վերջինի արձանագրութիւնը ամենից առաջ գտնուեց և կարդացուեց։ Արձանագրութիւններից երևում է, որ այդ ամրոցի իսկական հիմնողը եղել է Արգեշտին։ Այստեղ էլ կրկնւում է նոյն նշանաւոր փաստը, ինչ որ ասուեց Տաշբուրունի մասին, այսինքն Արգեշտին պատմում է քանդուած տաճարների և պալատների նորոգութեան մասին։ Այս երևոյթը մի անգամ էլ հաստատում է, որ Արմաւիրի բլուրը Վանի թագաւորների նախկին աթոռանիստն էր, բայց ժամանակի ընթացքում բոլորովին անուշադիր էր թողնուած, որովհետև արձանագրութիւնների մէջ նաճելու մասին յիշատակութիւն չկայ, ինչպէս Տաշբուրունի արձանագրութեան մէջ։ Քաղաքն ու նրա միւս շէնքերը վերանորոգելով՝ Արգեշտին հօր նման իր անունով կնքեց Argistichinili — «Արգիշտու բնակավայրը»։ Զատ կարելի է, որ այս անունը կապ ունենայ Հայաստանի Արմաւիր առասպելական մայրաքաղաքի հետ, որը Մովսէս Խորենացու ասելով հիմնուել է 2 հազար տարի Քրիստոսից առաջ։ Այս Արմաւիրը կար իրաւի 2-դ դարում Պտղոմէոսի ժամանակ, Armauria անունով, Հայաստանի պատմական դարերում *)։

Ոչ մի կասկած չկայ, որ Արգեշտինիների — Արմաւիրը պատերազմական գլխաւոր կենդրոն էր Արգեշտուն նրա հեռաւոր երկրներ նուաճելու համար, ինչպէս հովտի, այնպէս էլ լեռների տիրելուն և այդ ընդարձակ երկրի միջակէտն էր կազմում։ Նոյն նշանակութիւնն ունէր Սարդուրի II-դի համար, որը նոյնպէս պարապեց Արմաւիրի տաճարները, պալատները և ջրանցքները նորոգելով։ Ռուսայի արձանագրութիւնից երևում է, որ Արմաւիրը 100 տարուց աւելի նշանաւոր դեր կատարեց, որովհետև այստեղ էր Ասորեստանի Ասորա-բանիբալ թագաւորի ժամանակից այդ թագաւորի արքայանիստը։ Սա էլ Արմաւիրում պալատ է շինել Արգեշտու և Սարդուրի նման։ Շընայելով շէնքերի վրայ գործ դրուած քարի ահագին քանակութեամբ սպառելուն, այնուամենայնիւ արձանագրերի քարը նոյն նիւթից լինելով, ցոյց է տալիս նրա կատարած զինուորական քաղաքակրթական դերի երկարատև լինելը։

Վանի թագաւոր Արգեշտին և նրա յաջորդներն Արմաւիրից դէպի Փոքր-Կովկասի լեռնային երկիր-

*) Տես Տարազ № 24.

*) Հեղինակն, ինչպէս երևում է, ուղղել է իր սխալն Արմաւիրի մասին. «Վանի արձանագրութեանց» մասին յօդուածում Արմաւիրը համարում էր առասպելական, մտածածին քաղաք։ Այժմ ընդունում է նրա գոյութիւնը, թէպէտ շարունակում է առասպելական անուանել։ բաւական է որ քաղաքը կար, կարող էր և մայրաքաղաք լինել հայոց թագաւորների ժամանակ։ Արգեշտու նման հայոց թագաւորներն էլ կարող էին հասկանալ տեղի կարևոր դիրքը և իրանց համար աթոռանիստ ընտրել։ Վերջապէս հայոց հեթանոսական կրօնի մնացորդներից իմանում ենք, որ Արմաւիրը կրօնական քաղաք էր (Մով. Խոր. գիրք ա. գլ. ի), մի փաստ, որ հաստատում է հին ազգերի քաղաքական և կրօնական կենդրոնի մէկ լինելով։

Ծ. թարգմ.

ները զանազան ուղղութեամբ գնալու յարմար միջոց ունէին։ Նրանք պարզապէս դէպի հիւսիս էին գընում, ուստի հետամուտ եղան և մասամբ էլ տիրեցին այն նախնական բնական ճանապարհներին, որոնք Փոքր Կովկասից դառնում էին դէպի Մեծ Կովկաս։ Այդ ճանապարհներից առաջին և ամենամօտը տանում էր Երևանի հարթութիւնից դէպի հիւսիս-արևելք։ Այս այն գիծն է, որով այժմս կատարում է Թիֆլիս-Երևանի անց ու դարձը։

Երևանից դէպի հիւսիս, Զանգու գետի հոսանքին զուգահեռական ուղղութեամբ սկսում է զառիվեր և յարմար վերելք, որն անզգալի կերպով բարձրանում է 70 վերստ տարածութեան վրայ Գեօկչայի կամ Սևանի լճի հիւսիս-արևմտեան ափով և ունի ծովի մակերևոյթից 7 հազար ոտք բարձրութիւն։ Լճի հիւսիսում սկսւում է Սեմենովկի սարահարթը և ապա իջնում է Գիլիջանի ձորը և Աղստև գետի հովիտը, որ իր հերթում տանում է դէպի Կուր գետի հովիտը։ Այս ճանապարհը ուղղակի դէպի Մեծ Կովկաս տանող ճանապարհներից մինն է, որի վրայով կատարել է ազգերի մեծ գաղթականութիւնը։ Որ Վանի թագաւորները ոչ միայն առաջ էին շարժւում, այլ և հաստատւում էին այդ ճանապարհի վրայ, դրան վկայում են նրանց թողած արձանագրութիւնները որպէս անհերքելի փաստեր։ Արձանագրութիւնները մնացել են ժայռերի վրայ։ Նրանց պարունակութիւնը և գտնւած տեղերի բնութիւնը միջոց են տալիս մեզ թոյլ գաղափար կազմել այն թագաւորութիւնների կամ գրաֆութիւնների կազմելու պայմանների և տարածութեան մասին, որոնցով տրոհւած էր երկիրը մեր քննած ժամանակներում։ Արմաւիրից դէպի Երևան ճանապարհը հարթ է և ապահով։ Բայց պէտք է կարծել որ այդ քաղաքը կամ դրան համանուն երկիրը գոյութիւն ունէր Անդրկովկասում Վանի տիրապետութեան դարերում։ Երևանը գտնւում է հարթութեան հիւսիս-արևելքը փակող լեռների ոտքում, Զանգու լեռնային գետակի վրայ։ Սա դուրս է գալիս Գեօկչայի հիւսիս-արևմտեան կողմից, հոսում է լեռնոտ տեղերով և հասնելով Երևան, թեքւում է դէպի Արաքսը։ Այս գետը պէտք է որ բնական ճանապարհ լինէր դէպի հիւսիս տանող, եթէ որ նրա հետ զոյգ լեռների զառիվայրի վրայ ուրիշ աւելի յարմար ճանապարհ չլինէր, քան թէ էր Զանգուի ձորը։ Բայց Զանգուի հովիտը ուրիշ կողմից կարևոր նշանակութիւն ունէր. այդ այն է որ դաշտերը ջրւում էին նրա ջրերով և այդպիսով հողը բարեբեր էր դառնում։ Պէտք է կարծել, որ Զանգուի ջրաբաշխական դրութիւնը մի փոքրիկ պետութեան սիրտն էր կազմում, որը կոչւում էր այժմեան Երևանի անունով։ Արձանագրութիւններից մէկում յիշւում է Erianini երկրի անունը, որ խիստ նմանահնչիւն անուն է Երևանի հետ և նրանց նմանութիւնն այնքան զարմանալի է, որ անկարելի է նմանութիւնը չընկալանալ։ Եթէ ի նկատի ունենանք և այն հանգամանքը, որ Երևան անւան ստուգաբանութիւնը տեղական լեզուներով չի բացատրւում, այն ժամանակ կասկած չի մնում, որ երկու անունները նոյնն են։ Երևանի հարթութեան հարաւային մասը, Արաքսի հովիտը, որ կպչում է Մեծ-Արարատին, ինչպէս տեսանք, կոչւում էր Էրիդուախի,—նոյնպէս նմանահնչիւն Երևան անւան հետ։ Սակայն պէտք է կարծել, որ (Erianini) ամբութիւնը Ուրարտեան շրջանում զորնւում էր այժմեան Երևանից մի վերստ հեռու դէպի հիւսիս-արևելք Զախմախչի գիւղի մօտերը։ Այստեղ մի բլրի վրայ, որ կոչւում է հայերէն «Արեան բերդ» և թուրքերէն «դանլիթափա», գտնւել է մի սեպաձև արձանագրութիւն, որ պատմում է Արգեշտու կառուցած ամրոցի մասին։ Իւանովսկի ռուս գիտնականի հետազօտութեամբ այս ամրոցի մնացորդները կրում են Ուրարտեան ծագման հետքեր։ Զատ հաւանական է, որ այս Էրիախնի երկիրը բռնում էր հարթութեան մի մասը, գոնէ այնքան տարածութիւն, որքան տեղ որ հասնում էր Զանգուի ջուրը։ Առհասարակ պէտք է նկատել, որ մի երկրի ջրաբաշխական դրութիւնը սաստիկ ազդում է տեղի հասարակական և տնտեսական պայմանների վրայ, իսկ այն ժամանակներում աւելի մեծ ներգործութիւն կունենար և գլխաւոր դերիչ կլինէր քաղաքական և հասարակական կեանք ստեղծելու։ Բոլոր բնակիչները, որոնք իրանց ցանքսերը ջրելու ջուր էին ստանում միևնոյն աղբիւրից, պէտք է որ իրերի բերմունքով կազմէին իրանցից մի համայնք, մի ամբողջութիւն։ Քանի որ գետերի ջրերը պէտք է գործ դրւէին մինչև վերջին կաթիլը, այդ պատճառով ուռոգման կարգաւորութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունէր և միայն այդ բանը կառաջացնէր փոխադարձ շահերի համերաշխութիւն, և այդ համերաշխութիւնը պահպանող վարչութիւն։ Երկրի լեռներն ու կիրճերը դժւարացնում էին ճանապարհների հաղորդակցութիւնը և առաջ բերում նրա ֆիզիքական տրոհմունքը, դրանից էլ ստեղծւում էին քաղաքական մանր իշխանութիւններ, թագաւորութիւն կամ նախարարութիւն անւան տակ։

Պարզապէս այդ հանգամանքների ազդեցութեան շնորհիւ կազմւած էր մի թագաւորութիւն, որ ընկ-

Ինգեբորգան ծովափին («Փրիտիոֆ դիցազնից»)

Նկար Գ. Կոխի

նում էր Երևանի Հիւսիսում Գեօկչայի և Սեմենովկայի գառիվայրի վրայ։ Երևանից 15 վերստ հեռու, խճուղու ճանապարհի առաջին կայարան Էյլար գիւղի մօտերը, մի փոքրիկ կրճի մէջ, մի մեծ քար կայ, որ դժւար էր ուրիշ տեղից այստեղ բերել. նրա վրայ աչքի է ընկնում 11 տողից բաղկացած սեպաձև մի արձանագրութիւն։ Արձանագրութիւնը խիստ լաւ է պահպանւել և պատմում է Արգեշտու Ուլանի երկրի և Դարանի քաղաքի նւաճելը։ Անշուշտ Ուլանի երկիրը և Դարանի քաղաքը պէտք է որոնել այդ նշանաւոր յիշատակարանի մօտերը։ Ի նկատի ունենալով որ Արգեշտին դրանց նւաճելն յաւէրժացնելու համար արձանագրութիւն է թողել, մենք եզրակացնում ենք որ թէ երկիրը և թէ քաղաքը մեծ նշանակութիւն ունէին նրա աչքում։ Այդ բանի բացատրութեան բանալին կունենանք, եթէ քննենք տեղագրութիւնը։ Էյլարից երկու վերստ հեռու գտնւում է Բաշ-քեանդ գիւղը, որտեղից սկիզբն են առնում այսպէս անւանած 40 աղբիւրները (Ղրխ-բուլախ)։ Այդ աղբիւրներից կազմւած ջուրը Էյլարից սկսած մինչև Երևան հարթութիւնը, տիրում է 20 վերստ երկարութեան և մի քանի վերստ էլ լայնութեան վրայ։ Այդ ջրի շնորհիւ բոլոր հովիտը մի ծաղկած պարտիզի է նմանւում և զարմանալի կերպով յիշեցնում է մեզ Արաքսի հովտի ճոխ բուսականութիւնն ու առատ ոռոգումը։ Մինչդեռ շրջակայ դաշտերն ու լեռները սակաւաբեր են և պակաս մշակւած, Ղրխ-բուլաղի հովիտը ովազիսի նման ծածկւած է երփներանգ ծաղիկներով, զարդարւած այգիներով և որթատունկերով։ Մի քանի տասնեակ գիւղեր համարեա իրար կողքի ձգւած, ապրում են միանման կենցաղով։ Սրանից հասկանալի է, որ հին ժամանակներումն էլ այստեղ հեշտ կարող էր զարգանալ քաղաքական և կուլտուրական կեանքը, ու գառնալ կենդրոնատեղի, ինչպէս նոյնը տեսնում ենք ուրիշ տեղերում։ Էյլարն ամենամօտ և առաջին գիւղն է, որ ջուր է ստանում աղբիւրներից, դրա հետ միասին նա ունի բարձր դիրք և լաւ է պաշտպանւած խաչաձև կտրող լեռների շնորհիւ։ Այս տարածութեամբ փոքրիկ երկիրը կոչւում էր Ուլուանի և նրա քաղաքը՝ Դարանի։ Կրճի դէմ ու դէմը, որտեղ գտնւում է արձանագրութիւնը, գիւղի կողքին բարձրանում է մի բլուր, Արմաւիրի, Տաշբուրունի և ուրիշ բլուրների նման, որոնց վրայ արձանագրութիւններ են գտնւել։ Նրա գլխին հին շէնքերի հետքեր են երևում։ Ըստ հաւանական է, որ սա Դարանի քաղաքի տեղն էր և գուցէ Էյլար գիւղի անունը որ ստուգաբանել չի լինում, պահպանել է Ուլուանի հին երկրի անունը։

Ներսէս քահ. Նիկողոսեանց
(Կրcարուճակի)

ԿԱՄՔԻ ՈՅԺԸ*)

վէպ Ժ. Օճի

Դ.

—Թողէք այստեղ ձեր բերած շարդը, ասաց Հեղինէն. այսօրւանից ես միայն ձեզ համար պիտի աշխատեմ. միտքս եռանդով կըզբաղւի և ձեզանով, այնպէս որ ես ամեն մի սրդելուս հետ աւելի և աւելի պիտի յարեմ ձեզ։ Մինչև իմ վճիռ կայացնելը—դուք էլ ձեր կողմից խորհրդակցեցէք ձերոնց հետ, որովհետև ձեր առաջարկութիւնը ընդունելու դէպքում—ես կամենում եմ, որ ձեր տունը մտած ժամանակս—բարեկամաբար ընդունեն ինձ։ Ասղնեզործը վերջացնելուց յետոյ ինքս կըբերեմ և եթէ ձեր մտադրութիւնը փոխած չէք լինիլ, իմ վճիռս էլ համաձայն կըլինի նրա հետ, այն ժամանակ մենք կըվերջացնենք գործը։

Տիկին Էրօ գոհ մնաց այս առաջարկութիւնով, գրկեց երիտասարդ աղջկան և քնքշութեամբ համբուրեց նրան։

—Աշխատեցէք ջանասիրութեամբ, ասաց տիկին Էրօ զգացւած—որպէս զի ինձ երկար չըձանձրացնէք։

Տիկինը գնաց—Հեղինէն ճանապարհ ձգեց նրան մինչև դուռը։

Հէնց նոյն օրը տիկին Էրօն ուրախ-ուրախ պատմեց իր այցելութեան մասին Լուիին, երբ նա եկել էր նա։ խաչաշելու քիչ գունատ և շատ տխուր։ Լուի լռութեամբ լսում էր, կարելի է իսկի չէր էլ լսում։ Նա այդ բոպէին Պուանսոնիեր արւարձանից շատ հեռու էր և մտքով թափառում էր Գաբրիէլ փողոցի վրայ գտնւող տան շուրջը։ Եւ ահա երևում է նրան թէ ինչպէս մի հաստիկ, շողշողուն գէմքով պարոն, կամաց կամաց—գաղտնագողի մտնում է առաջի յարկի լուսաւորւած սենեակը, ապա մի կին—տնային գիւրեկան զգեստի մէջ, քաղցրութեամբ ընդունում է նրան։ Պարոնը նրան պինդ սեղմում է իր կրծքին. գիշերային լամպարը լուսաւորում է աղօտ լուսով ոսկեգոյն մազերը, որոնք թափւել են նրա ձիւնի պէս սպիտակ ուսերի վրայ, հրաշալի դէմքը կենդանանում է դիւթական դմայլելի ժպիտով, կապոյտ աչքերը փայլում են աննման թովչութեամբ։ Բայց, ասում է ինքն իրան Լուի, սա այն ոսկեգոյն հոտաւէտ մազերի փնջերն են, որոնք փաթաթել էին ինձ, սա այն ժպիտն է, որ ինձ գերեց, այն հայեացքը, որ թափանցեց հոգուս խորքերը։ Նրա ուսերը իմ ձեռքումն էին, նրա վարդագոյն շրթունքները կպել են իմ բերանին... Ինչպէս կարող էր—նրանից յետոյ, մէկը մօտենալ նրան. և ինչ սոսկալի, ստոր խաբեբայ է այս կինը, որի մասին սակայն, նա առանց տարփալից դողոցի չէ կարողացել մտածել։

Տիկին Էրօ, կարծելով թէ թոռը ուշադրութեամբ լսում է, շարունակեց.

—Ես նրան խնդրեցի գալ ինձ մօտ և մնալ ընդ

*) Տես Տարազ № 25.

միշտ... Յուսամ թէ դու ոչինչ չես ունենալ ասելու, եթէ նա համաձայնի գալ։

Լուի մի առանձին նշանակութիւն չդուեց պառաւի խօսքերին ու պատասխանեց.

—Ի հարկէ, տատի, եթէ դա քեզ բաւականութիւն կրպատճառէ։

Տիկին Էրօ շտապով վեր կացաւ տեղից և գրկեց թոռանը։

—Որքան սիրալիր ես դու, Լուի։ Ես կարծում էի թէ մի օտար մարդ մեզ մօտ բնակեցնելը քեզ դիւր չի գալ—ասում էր պառաւը։

Լուի բացասական շարժում գործեց գլխով և նորից խորասուզուեց իր կատաղի մտքերի մէջ. Նախաճաշից յետոյ նա առանձնացաւ իր սենեակները—երկրորդ յարկ, որ ամբողջովին նրա տրամադրութեան տակ էր դրուած։ Երկու ժամ անընդհատ ծխում էր սիգարներ—յուզող մտքերից ազատուելու համար, սակայն դրանով նա աւելի էր բորբոքում իր երևակայութիւնը։ Նա անդադար տեսնում էր հրաշագեղ կնոջ ոսկեգոյն մազերով սիրաբորբոք—գբրգռող, գիշերային այցելուի գրկի մէջ, կրճտում էր ատամները լսանգից ու չարութիւնից, երբ մտածում էր, որ այդ երջանկութիւնը վայելում էր ատելի Լերեբուլէն։ Սարսափելի մտքեր էին յղանում նրա տաքացած գլխի մէջ. Նա ասում էր ինքն իրան.

—Ես էլ նրա պէս հարուստ եմ և երիտասարդ. ինչու նա իմս չըպէտք է լինի. ես նրան կըվճարեմ, որովհետև նա ծախու կին է, նա դարձեալ մի ճարպիկ կոմե դիա կըխաղայ, ինչպէս այդ արաւ դիմակահանդիսի ժամանակ և չիմարացրեց ինձ. և դրա համար էլ նա այժմ սպասում է ինձ։ Նա խաբելու է Լերեբուլէին ինձ համար—իսկ ինձ՝ ուրիշների համար։

Լուի այս խօսքերի վրայ սարսափելի կերպով ծիծաղեց և այնպիսի կատաղութեամբ զարկեց բռունցքով փոքր սեղանին, որ նա փշուր-փշուր եղաւ։

—Նրա ժպիտը, նրա հայեացքը, նրա մազերը, մարմինը—շարունակեց Լուի ինքն իրան—իւրաքանչիւր ոք կարող է գնել փողով! եթէ այդպէս է, նա ինձ պէտք չէ, ոչ։ Նա ինձ չի խաբիլ, ոչ ոքի հետ նա ինձ վրայ չըպիտի ծիծաղէ։

Լուի սկսեց շրջել սենեակի մէջ, կանգնեց վառարանի առաջ, նայեց Ժամացոյցին և կանչեց սպասաւորին։ Նա հրամայեց կաւաքը լծել և սկսեց հագնուել։ Ժամը հինգին գնաց կայսերական կլուբը և գրեթէ համոզուած էր, որ այնտեղ կըտեսնէ Լերեբուլէին և Ֆոցիային. այնտեղից մինչև Օլի Խոնի բնակարանը երկուհարիւր քայլ էր. որքան էլ երգւում էր չըմտածել Դիանայի մասին, այսուամենայնիւ, նա գնում էր այնտեղ, որտեղ կարող էր տեսնել նրա սիրականին և որտեղից նա մօտ կըզգար իրան նրա տնից։

Եղանակը հրաշալի էր։ Զբօսնողների խումբը շտապում էր դէպ Ելիսեան դաշտերը։ Կլուբի դահլիճները դրեթէ դատարկուել էին. թղթախաղը դանդաղ էր գնում։ Հանդիսականների մեծ մասը դուրս էր եկել պարտէզի տերրասի վրայ, որ նայում էր Կոնկորդեայ հրապարակին։ Կլուբի անդամները—այստեղ—դդեակի մէջ մայր մտնող արևի ճառագայթներից պաշտպանուած, բազմած էին հանդիստ բազկաթոռների վրայ, ծխում էին և խօսում։ Թարմ կանաչի և ծաղիկների հոտով լցուել էր օդը—բարեկեցութեան քաղցր և հանգստացուցիչ զգացմունքը թափանցում էր հոգու խորքերը։ Լուի անցաւ նրանց մօտով, մի քանիսներին ողջունեց. մի քանիսներին էլ ձեռք տուեց անհոգութեամբ և դիմեց հեռուն, հասաւ մինչև տերրասի ծայրը, յենուեց պատշգամբի ճաղերին և սրտի դառն կսկիծով ու ծանրացած գլխով մեքենաբար սկսեց դիտել դէպի պարտէզ ղիմող կառքերի շարքերը։ Նա ծխում էր ընդմիջումներով և դեռ չըծխած մի սիգարը՝ սկսում էր միւսը։ Այսպէս կէս ժամի չափ մնաց մենակ. մէկ էլ յանկարծ զգաց, որ մէկի ձեռքը դիպաւ իր ուսին։ Նա յետ նայեց և տեսաւ ուրախ ու զարթ Լերեբուլէին առաջը կանգնած։ Սպասաւորը սենատորին պարտիզի աթոռ տուաւ նստելու. հաստլիկ պարոնը տնքայով ընկաւ բազկաթոռի վրայ և ճակատի քրտինքը սրբելով ասաց.

—Սարսափելի շոգ է։ Ես ման էի գալիս բժշկի պատուէրի համաձայն և բոլորովին քրտնել եմ չընայելով, որ շատ բարակ եմ հագնուած։

Լուի նայեց նրան։ Լերեբուլէ հագնուած էր շատ մաքուր և ճաշակով։ Այն մէջքն ընդրկող ժակետի տակից երևում էր պիկէյնի ժիլետը. բաց մոխրագոյն վարտիկը ծածկում էր նրա հաստ ոտները. նա հագել էր մետաքսեայ ծաղկաւոր գուլպաներ, փայլուն ոտնամաններ, կապոյտ փողկապ, սպիտակ հանդոյցով լիքը կզակի տակ, և գլխին էլ գորշ գոյնի գլխարկ սև երիզով։ Նա յենուել էր մի հրաշալի և ոսկէ գլխիկով ձեռնափայտի վրայ։

—Ֆոցիային տեսել էք այսօր. հարցրեց սենատորը—սիգարը վառելով։

—Ոչ, պատասխանեց Լուի։

—Ես նրա հետ առաւօտ երկար խօսակցութիւն եմ ունեցել. շարունակեց սենատորը։ Ինձ առաջարկում են մասնակցել մի շատ մեծ գործի, և ես ցանկանում էի իմանալ նրա կարծիքը։ Դուք գիտէք որքան ուղիղ է նրա հայեացքը, երբ նա քննում է որևէ գործի նախագիծ և գտնում է որ կարելի է գործադրել—համարձակ կարելի է սկսել գործ... Ես երբէք սրա պէս գործն իսկոյն հասկացող մարդ չեմ տեսել. բայց որովհետև խօսքը վերաբերում է մի ձեռնարկութեան, որ շատ նշանաւոր է և բարդ...

—Ի՞նչիս է պէտք, պատասխանեց Լուի սառնութեամբ. զայրացած որ մի մարդ, որին նա պատրաստ է խեղդել, այսպէս հանդարտ կերպով խօսում է գործի մասին։

—Ի՞նչպէս թէ «ինչիս է պէտք»—գրողը տանի։ Քէ՞ որ ձեզ հետ ընդհանուր է մեր շահը, սիրելիս, և ես առանց ձեզ ոչինչ չեմ կարող վճռել։

—Ես տրամադիր չեմ լուրջ գործերով պարապել—ասաց Լուի կտրուկ ձայնով.

—Սակայն շնորհ արէք. լսեցէք ինձ։ Կարծում եմ... այս ձեռնարկութիւնը մեզ ոսկէ լեռներ է խոստանում և մէջտեղ կըտայ ձեզ լրացնել այն պակասը, որ դուք հասցրել էք ձեր կարողութեան... խնդիրը վերաբերում է երկաթէ լարեր Ամերիկա փոխադրելուն առանց Անգլիային մաքս վճարելու։ Կազմակերպւում է մի մեծ Ամերիկական ընկերութիւն, մենք էս պէտք մի ֆրանսիական ընկերութիւն սարքենք։ Մենք—տեսնում էք, դրամագլուխ ենք

Ամերիկա. Հրաբխերի կեանքից

Սմիռն.—Պատկամիսներ

գնում գործ սկսելու համար և տալիս ենք երկաթէ լար։ Անհաասկ այդ ժամանակ դուք մէջ տեղ էք գալիս ձեր Սեն-Դենիի գործարանով, որպէս զի գործին աջակցէք նիւթականով. այստեղ կըհարկաւորեն ձեր թիթեղ և լարեր պատրաստելու բաժինները!...

—Լաւ! ես կըպատուիրեմ, որ մի նախագիծ պատրաստեն.

Լերեբուլէ բարձրացրեց գլուխը և խորը թափանցող հայեացքով ուշադրութեամբ նայում էր երիտասարդին։

—Ի՞նչ է պատահել ձեզ, հարցրեց նա։ Դուք այսօր շփոթուած էք երևում։

—Գլուխս քիչ ցաւում է։

—Ա՜, դա երեկուայ երեկոյեան հետևանքն է... Սակայն, մենք գնացինք դրեթէ միաժամանակ, ինչպէս ինձ ասաց Ֆոցիա, և ես, տեսնում էք, թարմ և զարթ եմ... մինչդեռ ես ձեր եմ!

Նա ինքնահաճ կերպով նայեց իր կոճկատեղը հագցրած վարդին։

—Այդ—կարելի է, նրանից է, որ այն անկողինը, որի մէջ դուք անցրել էք գիշերը—իմից լաւն է! ասաց Լուի գաւն ծիծաղով։

—Դրանով ի՞նչ էք ուզում ասել, հարցրեց Լերեբուլէ քիչ յուզած։

—Ոչինչ, յայտնի է թէ դուք ինչպիսի կեանք էք վարում... և համարձակ կարելի է գրազ դալ, որ երբ մեզ մնաս բարև ասացիք՝ դուք տուն չըգնացիք...

—Ձեմ հակաճառիլ. պատասխանեց Լերեբուլէն սնապարծութեամբ։

—Եւ ի հարկէ, այն կինը, որին դուք այցելեցիք լաւ շրջանի է պատկանում. հարցրեց Լուի։

—Օ, ի հարկէ, ամենաընտիր շրջանի, չըգիտեմ թէ դուք ինչպէս էք նայում գործի վրայ, բայց ես այլևս տանել չեմ կարողանում պոռնիկ կանանց... Առաջ ինձ համար միևնոյն էր, միայն թէ կինը գեղեցիկ լինէր և ես նրանից ուրիշ ոչինչ չէի պահանջում։ Յետոյ ես աւելի զգոյշ եղայ. պարում էի որոշ ծանր, վայելուչ տեսք, աշխարհիկ ընդունելութեան ձևերի նրբութիւն... ես չէի պահանջում, որ բոլորը լինի այն՝ ինչ որ երևում է. .

—Դուք բաւականանում էիք կեղծիքով—նկատեց Լուի։

—Այժմ ես պէտք է ունենում կատարեալ հաւանականութիւն, որ կեղծ չեն ոչ անունը և ոչ գիրքը...

—Զգուշացէք, բարեկամս, երբեմն կեղծ արծաթը դժուար է ջոկել իսկականից։

Լերեբուլէ ծիծաղեց և ասաց հպարտութեամբ.

—Օ, ես հաւատացած եմ գործի մէջ—ես վերաստուգել եմ!

Նա յանկարծ լռեց. Բուասի փողոցից դուրս էր գալիս մի կառք, որին լծած էին մի զոյգ աննման ձիեր։ Կարմիր բրդէ փնջիկները գլխներին—պողպատէ շղթաները իւրաքանչիւր քայլին-գրնգրնգում էին, կառապանի լիւրէյան—այս բոլորը վերին աստիճանի շքեղ տիկին Օլիֆոն կառքի մէջ՝ վայելուչ կերպով կէս կողքի ընկած ժպտում էր. հիանալի զգեստը հագին, որի գոյնը ցոյց տալիս նրա դէմքի թարմութիւնը և մազերի փայլը։ Իբրև թէ պատահաբար՝ կառապանը տերրասի մօտով անցնելիս—ուր կանգնած էին Լուի և Լերեբուլէ—ձիերը պահեց որոնք տեղն ու տեղը ցատկտում էին։

Լուի գուշակեց, երբ յանկարծ տեսաւ նրան, որ իր մտքից չէր հեռանում—և որը կրծում իր սիրտը։ Նա ունքերը կիտեց, և ջղաձգու�եմբ բեխերը ոլորելով. մընաց յենած տերրասի պաշտպանի ճաղերին, երակները արնով լցուեցան, շնչառութիւնը արագացաւ. Նա նայում էր Դիանայի վրայ և ուզում էր վիրաւորել նրան, անպատուել։ Լերեբուլէ վերկացաւ ուրախ։ Այս հրաշալի գեղեցիկ կինը անցնում էր իր տիրոջ առաջով. իբր թէ նրան պատել ցանկանալով։ Ինչ որ նրա մէջ կար զմայլելի և փայլուն—պատկանում էր Լերեբուլէին. բաւական է եթէ նա մի նշան տայ, կառքը կըկանգնի, մէջը կըմտնէ, կընստէ Դիանայի կողքին և ցոյց կըտայ ամբողջ Պարիզին, եթէ ուզենայ։ Սակայն գաղտնի յարաբերութիւնը բացարձակ բախտաւորութիւնից նրան աւելի էր դուր գալիս. նա մի առանձին հաճոյք է զգում գաղտնի երևալ, ինչպէս Իւպիտեր—այս ժամանակակից Դիանայի մօտ։ Նրա խաղացած կոմեդիան—մի տեսակ հաճելի կերպարանք էր տալիս իր սիրոյն։ Ամեն անգամ, երբ նա երեկոյեան, յաճախում էր տիկին Օլիֆոնին—սառը քրտինքով պատում էր դէմքը. Նրան թւում էր թէ իսկոյն գրան ետևից դուրս կըգայ սեր-Ջեմսը ատրճանակը ձեռքին, որպէս զի անպատուութեան վրէժը լուծի։ Սակայն Լերեբուլէ գիտէր, որ պատուելի ջենտլմենը անտեղեակ չէ թէ որտեղից է այն շքեղութիւնը, որի մէջ ապրում է։

Բայց ողջ մէկ է! Դիանան նրան ասել է թէ իր ամուսինը ընդունակ է սպանութիւն գործել. և սաստիկ վախենում էր նրանից։ Բայց այդ բոպէին նա առիթ չունէր սարսափելու և հանդիստ կերպով վայելում էր իր յաղթութիւնը, իր երջանկութիւնը։

Դէպի փողոց խոնարհելով, բարևելու համար, նա այնքան յափշտակուեց սքանչելի տեսարանով, որ չընկատեց թէ ինչպէս Լուի մատի ծայրով հազիւ դիպաւ իր գլխարկին ի նշան բարևի և շուռ եկաւ իբր թէ նայում է դէպի միւս կողմ։

Տիկին Օլիֆոն հովանոցի ծայրով դիպաւ կառապանի ուսին և կտրուկ ձայնով ասաց.

—Կանգնեցէք.

Լուի անհոգութեամբ թիկն տուած ճաղերին, ըսպասում էր և դիտում աչքի տակից երիտասարդ կնոջ բոլոր շարժումները. տիկին Օլիֆոն կանգնեցրել էր կառքը իր համար և ոչ Լերեբուլէի. այդ նա գուշակեց։ Նա նկատեց թէ ինչպէս Դիանայի դէմքը փայլեց ուրախութեամբ երբ տեսաւ իրան, և ապա նոյն այդ դէմքը զարմացաւ, երբ ինքը հազիւ նրան բարևեց. տիկին Օլիֆոն ուրմտած էր թէ ինչու իր վրայ ուշադրութիւն չեն դարձնում։

Նա շտկեց տեղը. ամբողջ իրանով քիչ առաջ նետուեց, կիտեց ունքերը և ուղիղ նայեց Լուիի վրայ չարութեամբ լի։

—Ինչու համար չեկաք ինձ մօտ. հարցրեց նա հրամայական ձայնով.

Լուի անշարժ կանգնած էր և լուռ։ Լերեբուլէ

նայեց երիտասարդի վրայ, որ չէր շարժւում և ոչ մի բառ չէր արտասանում, կարծեց թէ հարցը իրան է ուղղուած— պատասխանեց.

—Բայց, սիրելիս, մի՞թէ մենք պայմանաւորուել ենք, որ սպասէք ինձ. ներեցէք—ես այդ չեմ յիշում։

—Ես ձեզ հետ չեմ խօսում, ասաց Դիանան անսովոր յանդգնութեամբ, այլ պ. Էրօ՞ի հետ։

Վերերուլէին թւաց թէ երկիրը դողաց, երկինքը մ'ժաղնեց. նա նայեց իր բարեկամի վրայ և իր սիրուհու վրայ, զարմանքից պլշեց աչքերը, ականջներում վշվշոց էր լսում, նա լսեց Լուի և Օլիֆոնի մէջ տեղի ունեցած հետևեալ խօսակցութիւնը։

—Ես չըկարողացայ դալ, վճռեց պատասխանել երիտասարդը—ես զբաղուած էի։

—Զատ ծանր գործ էք ունեցել, ի հարկ! Իսկ երեկոյեան կըգա՞ք.

—Հաղիւ թէ, պատասխանեց Լուի։

—Իսկ վա՞ղը.

—Նոյնպէս ոչ.

—Ուրեմն երբ՞ք.

—Երբէք։

—Բացատրեցէք, ի՞նչ է նշանակում այս.

—Ոչ. աւելորդ է.

Այս ասելով նա խոնարհուեց և քանի քայլ յետ քաշուեց, այնպէս որ Դիանան այլ ևս չէր կարող տեսնել։ Լուի լսեց թէ ինչպէս նա բարկութիւնից ճչաց և ապա հրամայեց կառապանին.

—Դէպի պարտէզ։

Սուրեն

(Կըշարունակի)

ՊՈՒՇԿԻՆԻՑ

I

Աղմկալից փողոցում
Թէ տաճարումն ես լինիմ
Կամ խնջոյքի ժողովում,—
Իմ մտորմունքն ես ունիմ։

Ասում եմ ես. տարիներ
Կ'անցնեն, ու մեզ յաւիտեան
Պիտի գրկէ սև գիշեր—
Մէկինս էլ արդ մօտ է ժամ։

Կաղնի տեսնեմ մենաւոր
Խորհում եմ ես, թէ ինձ էլ
Կըթաղէ այս ալևոր,
Ինչպէս նախնեացս է թաղել։

Քնքուշ մանուկ սիրելիս,
Ասում եմ. կաց դու բարով.
Ցեղը ես քեզ եմ տալիս,
Ծլիս, ծաղկիս քաղցր օրով։

Եւ ամեն օր, ամեն ժամ
Մտածմունքս է անպակաս,
Աշխատում եմ լմանամ
Մահուս տարին վերահաս։

Եւ ո՞ւր բախտն ինձ կըտայ մահ—
Ճանապարհին թէ կեւում.
Թէ՞ հովիտն է մերձակայ
Իմ պաղ մարմնին ըսպասում։

Եւ անզգայ թէպէտ դիս
Մէկ է ուր էլ որ փտի,
Բայց հայրենի իմ հողիս
Կուզէի մօտ նա հանգչի։

Եւ գըբան մօտ իմ շիրմի
Կեանքը մատաղ թող խաղայ,
Եւ բնութիւնն անհոգի
Միշտ էլ չքնաղ շողշողայ։

II

Ով վարդ-աղջիկ, դերի եմ հս,
Բայց կապանքից չեմ ամաչում.
Արքայ-երգիչ սոխակն այսպէս
Անցնում է կեանքի դափնիներում
Հպարտ, չքնաղ վարդի մօտին,
Գերութեան մէջ, սակայն անուշ,
Եւ իր տաղերն երգում քնքուշ
Մութ, հեշտալի դիշերներին։

Գ. Սովհաննիսեան.

ՎԻՒՔԵԱԼԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ *)

ՎԷՊ

ԺԱ.

ՍԱՆՉԻԱԾ ՎԱԳՐԸ

—

«Վերջապէս վարագոյրներից մէկը շարժւեց, մի ձեռք բարձրացրեց մետաքսի կերպասները և ներս մտաւ քեզ ծանօթ արքայազունը։ Ես արդէն ոտքի վրայ էի, երբ նրան նկատեցի, խսկոյն խոնարհուեցի և յարգանքս լռելեայն յայտնելուց յետոյ, սպասում էի նրա հրամաններին։ Նա շուրջը մի սուր հայեացքով դննելուց յետոյ, բազմոցի կողմն

*) Տես Տարազ № 25.

ուղղեց և տեղաւորելով ճաճացող թիկնաթոռի վրայ, ընկղմեց խոհերի մէջ։ Մի քանի վայրկեան արձանացած մնաց իր տեղը։ Նրա դէմքից կարելի էր նկատել, թէ սրտի խորքերում ի՞նչ ահաւոր մրրիկներ էին ծփում։ Նրա երեսի կնճիռները շատ վաղ ակօսած խոր խորշումները երևան էին բերում և նա երևակայութիւնների մէջ ընկղմած, անթարթ նայում էր, անվստահ և երկիւղալի հայեացքով։

«Այդ մռայլ պատկերը իմ վրայ վհատութիւն բերեց, ես էլ նրա նման սուղեցի տխուր մտքերի անյատակ անդունդը։ Անվերջ ես ինձ հարց էի տալիս, թէ—Մի՞թէ այս է արքունիքի կեանքը, մի՞թէ սուլթանների զաւակները խսպառ դատապարտած են այսպիսի հոգեկան տանջանքների։ Մի՞թէ երանելի չէին սուլթան Սուլէյմանի, Մուրադի, Մէհմէդի զաւակները, որոնք իրանց հօր մահւան հետ պարտաւորած էին սրատւել և գերեզման իջնել։ Այս ի՞նչ հոգեկան տանջանքների են մատնում կենդանի արարածներին մի դահակալի քունը չըվրդովելու համար։ Եւ այս մտքերս վերջաւորութիւն չէին դտել, եթէ նա վերջապէս չընդհատէր։

—«Ձի՛ա, ասաց ծանրութեամբ, գիտե՞ս թէ քեզ ինչի կանչել եմ։

—Պատրաստ եմ, էֆէնդի՛, ձեր բոլոր հրամանները իրագործելու համար և կեանքս զոհաբերելու։

—Այո՛, եթէ կարիք լինի, այդ էլ չըպիտի իրնայես, այնպէս չէ՞։

—Ձեր խոնարհ ծառան եմ և ստրուկը, վստահեցէք, էֆէնդի, իմ կեանքս ձեր տրամադրութեան տակն է, երդւում եմ ձեր գլխով։

«—Դիշերս պիտի մեծ աչալրջութեամբ հսկես իմ սենեակում, դուռը բաց թողած և ամենափոքր աղմուկից ընկերներիդ հետ դուրս պիտի գաք ինձ օգնութիւն։ Մի՛ վախենաք, եթէ տասը բոպէ կարողանաք աղմկել ու դիմադրել, իսկոյն ձեզ օգնութեան կըհասնեն պարտիզպան զօրքերը, ջերքէզների վոհմակներն և արնաւուտները։ Ուրեմն հասկանում ե՞ս միտքս, մի տասն բոպէ և՛ չէ էլ այդքան դիմադրելու քաջութիւն եմ պահանջում։ Զորս հոգուցդ այդքան քաջութիւն պահանջելու իրաւունք ունեմ... Մի՛ վախենայ, ամեն բան նախամտածւած է և երկիւղի ոչինչ չը՛կայ, միայն թէ ես հակառակ դէպքն եմ մտածում... Պաշտումն ենք, ամեն բան կարելի է ենթադրել և պէտք է ամեն բանի հակառակ կողմի մասին էլ խորհել... Ես ձեր քաջութեան հետ և անձնանուիրութիւնն և հաւատարմութիւնը սևեռել եմ և չորս չէրքէզներիդ կեանքս յանձնում եմ, ձեզ եմ յանձնում...

—«Ձեր խոնարհ ստրուկն եմ, ասացի գլուխս թեքելով. պատրաստ եմ...

—«Ուրեմն հասկացա՞ր, թէ ինչ պարտք եմ դնում քու վրին։ Եղբօրդ արիութիւնն, հաստատակամութիւնը ինձ համոզել են, որ դու նրանից ոչնչով ետ չես մնալ։ Եւ ինչի՞ պիտի մնաս, քանի որ դու դեռ առաքինութեան տարիներիդ շրջանից դուրս չես թևակոխել։ Իմ ննջարանում ձեզ համար պատրաստած թաքստեան տեղեր կան. եթէ յանկարծակի վէպք պատահի, այնտեղից աներևոյթ-ալէս ամեն բան կըտեսնէք։ Այնտեղ կարևոր զէնքեր էլ կան։

—«Պատրաստ եմ ձեզ ծառայել...

«Նշան արաւ և մտայ այն դռնից ներս, որտեղից դուրս էր եկել ինքը և այնտեղից ննջարան, ուր ինձ սպասում էին երեք ընկերակիցներս, որոնցից միայն մէկի հետ գրաւոր ծանօթութիւն ունէի, որի նամակները քեզ հետ կարդացել ենք։ Զուտով մտերմացանք և իրար սրտերս բացինք, խոստանալով միանդամայն, որ ոչինչ չըխնայենք արքայադունին պաշտպանութեան համար։

«Բայց մեզ անյայտ էր, թէ ինչ էր կատարելու, այնպէս որ մենք բոլորովին անտեղեակ էինք մեր կատարելիք գործից։ Իրար հետ միտք փոխանակելիս, ենթադրութիւններս էլ թէև յայտնեցինք, բայց որոշ եզրակացութեան չըհասանք։ Մանաւանդ որ արքայադնը ասել էր ընկերներիցս մէկին,—թէ մի՛ ենթադրէք, որ որևէ ոճրագործութիւն է տեղի ունենալու, կամ որևէ անձնաւորութեան վրայ ձեռք է բարձրացելու։

Ընդհակառակը, լոկ մի խորհուրդ է կատարելու, ասել էր նա, իսկ ես անձիցս երկիւղ քաշելով, մինիստրութեան դաղանութեան հետ ծանօթ լինելով, ցանկանում եմ պաշտպանել։ Այս խօսքերը մեզ բոլորովին շւարացրել էին և մենք առանց որոշ եզրակացութեան հասնելու, վճռեցինք կուրաբար գործիք դառնալ և կատարել արքադունի հրամանները, նրա վրայ թողնելով ամբողջ գործի պատասխանատուութիւնը։

«Արդէն գիշեր էր։ Զատ չանցած լսեցինք դահլիճում ոտնաձայներ և իրար ետևից մարդիկ ներս էին մտնում, որոնց թէև մենք բոլորովին չէինք տեսնում։ Երբ արդէն բոլորը պատրաստւել էին, եկան մեր կից սենեակից հրաւիրեցին արքայադնին, որ դահլիճ մտնելուց առաջ, մեզ մօտ եկաւ և ասաց, - Տղէրք, աչալուրջ եղէ՛ք, այս պատուհաննե-

Ներուճդի շառաւիղը

րից փոփոխակի զննեցէք և զգոյշ կացէք։ Այս ասելով պատերի մէջ գտնուած զսպանակների վրայ մատերը դնելով փեղկերը բաց արեց և մենք երկու փոքրիկ պատուհանով սկսեցինք անհերևոյթապէս զննել, թէ ինչ էր կատարուում դահլիճում։

«Այնտեղ հաւաքուել էր մեր Վիւքալան, Մահմեդ փաշան և իր արբանեակները, երբ արքայազունը, դուրս եկաւ, բոլորը ոտքի ելան և խոնարհ յարգանք տալով, սպասեցին որ նստի և իրանց էլ իրաւունք տայ նստելու։ Մի քանի մօլլայի գլուխ թէև երևում էր ժողովականների մէջ, բայց Իդրիսը չերևար։ Վերջապէս նշան արաւ, որ ժողովականները նստեն և մի ընդարձակ բոլորակ կազմեցին։ Այդ ժամանակ Միդհատը գլուխ տալով, խօսք խնդրեց և սկսեց իր հռետորական ձևերով և շարժումներով բացատրել իր սահմանադրութեան կարևորութիւնները և երկրին հասցնելիք օգուտները։ Ժողովականները անշարժ լսում էին, ուշադրութեամբ լսում էր և ինքն արքայազունը։ Այդ ճառը շատ երկար չտևեց և վերջացաւ նրանով, որ Միդհատը, ընկերակիցները, իսլամի կղերը և ժողովուրդը յոյս էին տածում, որ այդ բոլորի հետ կըհաշուի իրանց առաջնորդը և երկրի զարգացման, բարգաւաճման համար արքայազունը կերդուի, որ կէտ առ կէտ գործադրել տայ սահմանադրութեան բոլոր յօդուածները։ Միանգամայն խօսեցան, որ ինքը սուլթանն Մուրադն էլ առանձին հրովարտակով հրամայել էր իրանց կազմել տալ մի ծրագիր սպասող սահմանադրութեան համար։

«Թէր և դէմ մի քանի նկատողութիւններից յետոյ, Շէյխ-իւլ-իսլամն առաջ եկաւ և գուրանը արքայազունին մօտեցնելով կանգնեց նրա առաջ։ Արքայազունը թէև դողնեց, թէև դողդողաց, բայց անճարացած ոտքի ելաւ և երդուելով ասաց.

—«Ինչպէս իմ սուրբ պարտքս է այս նուիրական գուրանի ամեն կէտին հպատակուել, այնպէս էլ ձեր առաջարկած սահմանադրութիւնից չշեղուել։ Երդւում իմ միակ Ալլահի անունով և ձեռքս դնելով նրա նուիրական գրքի վրայ, աշխատել և սահմանադրութիւնը հաստատել մեր երկրում։ «Այդ ժամանակ լուր ուղարկեցին և մայր սուլթանին կանչել տուին։ Մինչև նրա գալը Վիւքեալան և կղերը միջոց ունեցան մի քանի խօսք խօսելու ապագայում իրանց բռնելիք ընթացքի մասին և մի քանի թուղթ խմբագրեցին, որպէս զի հետևեալ օրը գործադրութեան յանձնուի։ Քիչ յետոյ եկաւ ինքը մայր սուլթանը իր ներքինիների հետ և նրան յատուկ ամենաբարձր վանդակը մտնելով, բազմեց։

—Միդհատ փաշան խօսք խնդրեց, որպէս զի բացատրէ նրանց իրանց ժողովի նպատակը։ Թագուհին թէև ամեն բանի հետ շատ լաւ ծանօթ էր, բայց այնպիսի դիրք էր բռնել, որ կարծես ամեն բան նոր էր լսում։ Երբ ճառը վերջացրեց, մայր սուլթանը շէյխ-իւլ-իսլամին դիմեց, որ օրէնքների համաձայն իր ֆէթուան տայ։

«Շէյխ-իւլ-իսլամն էլ պատասխանեց, թէ պէտք է ցնորուած գահակալին իջեցնել և յաջորդին գահ բարձրացնել։ Իսլամականութեան դեկը չի կարելի յանձնել մի խելագարի։

«Երբ ամենքը խօսքերը կարեցին, մայր սուլթանն ասաց.

«—Ես ինքս էլ նկատել եմ, որ որդուս սուլթանիս մտաւոր վիճակը քայքայուած է, երկրին հարկաւոր է մի կատարեալ խելահաս կառավարիչ, բայց մտածում եմ, գուցէ առողջանայ։ Ուստի շատ լաւ կըլինի ժամանակաւոր կառավարիչ նշանակել ա թ, տասն օրուան համար և բժշկական քննութիւնների օգնութեանը դիմել։ Եթէ այդ միջոցները չօգնեն, այն ժամանակ յաջորդին յանձնել երկրի դեկը։

«Թէև դարձեալ վիճաբանութիւն սկսուեց, բայց արքայազունի բանաձևի վրայ վճիռ արձակեց Շէյխ-իւլ-իսլամը։

«Վարչութիւնը յանձնել տասն օրուան ժամանակամիջոցով նրան՝ արքայազունին և քննութիւններ նշանակել, հմուտ բժիշկների խորհրդակցութեան դիմել։ Եթէ հնար չըտնուի եղբօրը բուժելու, այն ժամանակ գահից վար առնել։ Որոշեցին բոլորովին գաղտնի պահել այդ որոշումը և ամենից կնքուած արձանագրութեան մի պատճէնը մայր սուլթանին, միւսը արքայազունին և երրորդը Շէյխ-իւլ-իսլամին յանձնուեցաւ, որպէս զի տասն օրից յետոյ գործադրուի։

«Արդէն որոշեալ ժամանակն անցաւ և ամեն բան կարգի դնելով վաղ առաւօտ պիտի յայտարարուի աշխարհին. Մուրադ Ե. արդէն ութն օր է վանդակումն է, թագաւորում է Համիդ Բ.»։ Զարունակութիւնը յաջորդ գլուխ կիմացնեմ։ Քրոջս տես, հանդըստացուր։ Ջիա։

Ա. ս ր պ ե ա

(Կըշարունակուի)

Գեղարուեստ

Հայկական ներկայացումներ Զուրում

—

Եթէ մի ուրախալի բան կայ Զուրում, այդ թատրոնն է, որ յաղուրդ է տալիս հասարակութեան գեղասիրական ճաշակը զարգացնելու։ Այստեղ ամարանոց եկած տեղացիները, փոխանակ բուլգարային անմիտ կեանք անցկացնելու, ուրախութեամբ յաճախում է թատրոն գեղասիրական զարգացումներ ստանալու համար։ Յունիսի 20-ին դերասանական ընկերութիւնը, պ. Պետրոսեանի ղեկավարութեամբ ներկայացրեց «Օրայ Զարիֆ» Պոտելսինի պիէսը։ Շընայած որ յայտարարուած էր դէբիւտ օր. Խիթարեանի և պ. Արաքսեանի, այնուամենայնիւ շատ քիչ հասարակութիւն էր գրաւել այդ օրը թատրոն։

«Օրայ Զարիֆը», ինչպէս Պոտելսինի և միւս դրամաները, բեմական են, ու մի առաւելութիւն որ նա ունի, առօրեայ կեանքի հարցեր է շօշափում։ Հեղինակը իր դրամայի բովանդակութիւնը վեր է առել Մոսկուայի կեանքից և աշխատում է ցոյց տալ թէ ներկայ նիւթական դարումն, որքան մեծ ոյժ և նշանակութիւն ունի հընչող ոսկին, որի դրօշակի առաջ խոնարհւում է պատիւ, փառք և երջանկութիւն։ Գրիգոր Ալէքսէիչը (պ. Յարութիւնեան) արիստոկրատ շրջանում ծնուած ու սնուած անձնաւորութիւն լինելով, Խլոպոնինի վրայ նայում էր ինչպէս գիւղացու գռեհիկ, ստոր վաշխառուի վրայ։ Նրա հետ խօսելը մինչև անգամ պատիւ չէր համարում իրան, բայց «փողի» ոյժը այդ մարդուն մինչ այն աստիճան էր խոնարհեցրել, որ իր հարազատ աղջկան ծախում է այդ հարուստ վաճառականի տղի վրայ։ Լաւ տիպ էր նոյնպէս ուսանողի տիպը, որ փոխանակ համալսարան յաճախելու և դասախօսութիւնները լսելու, կնամոլ էր դարձել մամոնայի մեծ կարիք ունենալու պատճառով։ Ս. Խլոպոնինին (պ. Արաքսեան) սովորացնում է, թէ ինչպէս պէտք է մօտենայ քրոջը և ձեռք առնել, այն քրոջը, որ ատելով ատում էր թեթևսօլիկ Ս. Խլոպոնինին։ Պիէսի վատ կողմը միայն այն է, որ ընտանեկան դաղտնիքի մասին խօսում ու դատում են մեծ ու փոքրի առջև։

Պ. պ. Յարութիւնեան (Գրիգոր Ալէքսէիչի դերում) և Ղազարեանը անտանելի էին մանաւանդ բ-րդ գործողութեան ժամանակ։ Իսկ մնացածների խաղը միջակ կերպով անցաւ։ Օր. Խիթարեանը խաղում էր Ելենայի դերը. առաջին և երկրորդ գործողութեան ժամանակ լաւ էր և նկատւում էր որ օրիորդը խաղում էր հասկանալով. մի յատկութիւն, որ մեր դերասանուհիների և դերասանների մէջ քիչ է պատահում։ Պ Արաքսեանը յաջող տարաւ իր դերը. նրա խաղի յաջողութեան նպաստում էր դերը լաւ իմանալը. պէտք է նկատել որ նա միւս դերասաններից աւելի բարեխիղճ է։ Մի բան՝ որ դերասանները միշտ նրկատի պիտի ունենան, այն է՝ լաւ սովորեն դերը և կարողանան արտայայտել նրան բեմի վրայ և ոչ թէ պիէսայից շեղուեն։

Ամսի 27-ին խաղացին «Խանում» կոմ., որ հասարակութեանը բաւականին ծիծաղեցրեց։

Ա.դ-բար

Պատմական

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿՐԿԷՈՒՄ

II

Թէ ի՞նչպէս եկն կուսում պատերազմական կառքերով

(Կառաջաւոր)

—

Հռովմայեցիների ամենասիրելի տեսարաններից մէկը համարում էր պատերազմական կառքերով արշաւելը։ Հրապարակի վրայ միանգամից դուրս էին գալիս չորս կառքեր։ Մէկը միւսից զանազանելու համար՝ թէ կառքերը, թէ ձիաների սարքերը և թէ կառավարիչների հագուստները այլ և այլ գոյնի էին լինում—սպիտակ, կարմիր, կապոյտ և կանաչ։ Իւրաքանչիւր կառքում լծում էին չորս ձի. կառավարը կառքը վարում է, կանգնած։ Ով որ եօթն անգամ առաջ ու յետ շրջում էր ամբողջ հրապարակի երկարութիւնը, ամենից առաջ էր գալիս իր դուրս եկած տեղը, նա յաղթող էր համարւում և ստանում էր առաջին մրցանակը։ Հռովմայեցիք սկզբներում իրանց համար վայելուչ չէին համարում անձամբ կրկէս դուրս գալը։ Նրանց կառավարները վարձկաններ կամ ստրուկներ էին լինում. բայց յետոյ նրանց ցանկութիւնը դէպի այդ արշաւներն այնքան զօրեղացաւ, որ իբրև կառավարիչներ դուրս եկան նոյն իսկ ամենանշանաւոր մարդիկը, մինչև անգամ և կայսրները։ Այդ կառավարներին մեծ փողեր էին վճարում, ու նրանց լաւագոյների անուններն արդէն յայտնի էին ամբողջ երկրում. նրանց պատուին արձաններ էին կանգնեցնում։ Բայց աւելի մեծամեծ ծախքեր անում էին ձիերի վրայ։ Արշաւի լաւ ձին հռովմայեցու համար իր սեպհական որդկանցից էլ աւելի թանգ էր գնահատւում։ Պատահում էր այնպիսի մարդ, որ իր ամբողջ կարողութիւնն սպառում էր ձիերի վրայ։ Արշաւի ձիու սովորական գինը 1500 ռուբլի էր. բայց արշաւներում մի քանի անգամ մրցանակ ստացած ձիուն անհաւատալի մեծ փողեր էին վճարում։ Արշաւող ձիերի համար առանձին գոմեր էին շինում և նրանց կերակրում էին առանձին կերպով։ Կալիգուլա կայսրը իր սիրելի ձիու համար շինել էր մի գոմ—ապարանք։ Նա յաճախ հիւր էր գնում իր ձիու մօտ և նշանաւոր հռովմայեցիներին ստիպում էր այդ ձիուն երկրպագութիւն տալ։ Իսկ երբ կայսրն էր հրաւիրում ձիուն իր մօտ հիւր թագաւորական ապարանքը, այն ժամանակ նրան գարի ու ջուր տալիս էին ոսկէ դոյլերով։ Այդ ժամանակ Հռովմի մէջ պահում էին 400,000 արշաւի ձիեր։

Ձիերի և կառավարիչների գովքի մասին խօսում էին ոչ միայն արշաւները տեղի ունենալիս, այլ մինչև անգամ մի հանդէսից մինչև յետագայ հանդէսն էլ շարունակւում էր այդ խօսակցութիւնը։ Կայսրից սկսած մինչև ստրուկը—մարդիկ թէ կանայք, բարձր թէ հասարակ դասակարգը—ամենքն էլ խօսում էին միմիայն արշաւների մասին, թէ ով կը յաղթէ—կապոյտ, թէ կանաչ կառքերը։ Իրանք կայսրներն անգամ երբեմն կանաչ, երբեմն էլ կապոյտ կառքերի կողմն էին բռնում։ Ուսումնարաններում ու դատարաններում իրանց զբաղմունքները մոռացութեան տալով՝ նոյն վէճերն էին շարունակում կանաչի և կապոյտի վերաբերեալ։ Փողոցներում

ու հրապարակներում դրաւներ էին բռնում, գուշակողների մօտ էին գնում, խորհուրդ էին հարցնում կախարդներից, հաւատալով, որ նրանք այնքան զօրաւոր են, որ կարող են արագացնել կամ յամրացնել ձիաների ընթացքը։

Վերջապէս հասնում էր ցանկալի օրը։ Արդէն լուսաբացից էլ վաղ փողոցները լցւում էր մեծ բազմութեամբ. ամբոխը խնդում էր դէպի կրկէսը իր համար տեղ բռնելու։ Անհաւատալի իրարանցումն էր տիրում—գոռում, գոչիւն, հայհոյանք. ամեն անգամ նոյն իսկ հարիւրաւոր մարդիկ ոտնատակ էին տրւում։ Մի անգամ ամբոխի աղաղակը հասաւ նոյն իսկ մինչև ասպարանք և զարթեցրեց կայսրին։ Զայրացած Եղագաբալոսը հրամայեց մի խումբ թունաւոր օձեր նետել ամբոխի մէջ։ Այդ օրն իրար ճնշելուց և մանաւանդ օձերի խածելուց շատ մարդիկ փչացան։ Հանդէսն սկսւում էր գոհաբանական մաղթանքով։ Թափորը գուրս գալով մայր տաճարից՝ անցնում էր գլխաւոր փողոցով։ Տանում էին աստուածների պատկերները, գնում էին՝ քուրմերը, ծառայողները, պահապան զինուորները, ամեն կարգի աստիճանաւորները և ապա նրանց առաջնորդ—խաղերի արարողապետը։ Թափորը մտնում էր կրկէս փողեր հնչեցնելով, իսկ աստուածների պատկերները հարուստ պատգարակների վրայ դրած՝ շրջեցնում էին հրապարակի շուրջը։ Հանդիսականները թափօրն ընդունում էին բացականչութիւններով ու ծափահարութիւններով ոտի կանգնած։ Կալուածատէրերն առանձին յարգանքով էին դիմաւորում երկրագործութեան աստուածուհի Ցիրերին. զինուորականները՝ պատերազմի աստուած Մարսին։ Եթէ պատահէր, որ աստուածներից որ և է մէկի արձանը պատգարակների վրայ տեղից շարժուէր, ամենքն ուրախանում էին, կարծելով՝ որ աստուածներն իրանց ողջոյն էին առքում։

Կայսեր և նրա պալատականների համար կրկէսում առանձին տեղեր կային յատկացրած։ Հանդէսից առաջ ամբոխի մէջ սկսւում էր մի խուլ շշնջոց, որ աւելի նման էր ծովի ալիքների աղմուկներին։ Ամենքի աչքերը յառած էին լինում դէպի դռները, ուր ձգուած պարանների յետևը կանգնած էին արշաւի հասար պատրաստի ձիաները, որ կառքերին լծած խրխնջում, փռնչում էին։ Ահաւասիկ տնօրէնը տալիս է սովորական նշանը. նա իր կանգնած տեղից հրապարակ է նետում իր սպիտակ թաշկինակը։ Պարանները հաւաքում էին և պատերազմական կառքերն իսկոյն կանգնում էին հրապարակի վրայ։ Ձուտով բարձրացած փոշու թանձր ամպը ծածկում էր հանդիսականների աչքերից կառքերը. կառավարներն առաջ էին սլանում կռացած դէպ յառաջ՝ պինդ քշելով իրանց ձիերը։ Արշաւը շարունակւում էր կէս ժամից ոչ պակաս։ Յաճախ պատահում էր, որ կառավարները վայր ընկնում, և ձիերը քաշ էին տալիս նրանց. կամ կառքերն ընդհարւում էին միմեանց հետ և փշրւում և այդ ժամանակ հրապարակի վրայ մնում էին արիւնաշաղախ դիակների կոյտեր, կառքերի բեկորներ և սպանուած ձիեր։

Որքան աւելի էր մօտենում արշաւի վախճանը, այնքան էլ աւելի անհամբեր էին դառնում հանդիսականները և նրանց տիրում էր սարսափ, նախանձ, հիացում և կատաղութիւն։ Հանդիսականները թռչկոտում էին իրանց տեղերից, ծափահարում էին, գոռում էին, կռանում էին դէպ յառաջ, ձեռքերում թաշկինակներ էին խաղացնում, դրդում էին ձիերին, վիճում ու հայհոյում էին միմեանց, ատամները կրճտացնում էին, սպառնում և վերջապէս հիացման և յաղթութեան աղաղակներ էին բարձրացնում։

Այդ սիրելի տեսարանը դիտելուն արգելք չէր կարող լինել ոչ արեգակի խորշակը և ոչ յորդահոս անձրևը։

Արշաւները շարունակւում էին մինչև կէսօր, այնուհետև ընդհատւում էին։ Հանդիսականները կարող էին ցրւել իրանց տները ճաշելու համար։ Բայց չընկամենալով զրկւել իրանց տեղերից, մնում էին. իսկ աւելի մեծամասնութիւնը մնում էր ձրիաբար հիւրասիրւելու համար։ Եւ արդարև՝ սովորութիւն դարձաւ հանդիսականներին ձրի կերակրելը։ Սկզբներում միայն հաց ու խաշած բակլա էին տալիս, իսկ վերջերը կայսրները և խաղերի կազմակերպողները սկսեցին աւելի ճոխ հիւրասիրութիւններ անել. երբեմն իրանք էլ ճաշում էին այնտեղ կրկէսում։ Կայսեր ստրուկները զամբիւղներով հաց, կերակրեղէն ու գինի էին բաժանում հանդիսականներին։

(Կըշարունակւի)

Թագաժառանգ Յեսարեւիչի անիւնի տեղափոխութիւնը Բաթումից Պետերբուրգ

—

Բաթումից ռուս լրագիրներին գրում են. «Յուլիսի 7-ին, երեկոյեան 5 ժամին, Լիկանի և Բորժոմի շրջակայ բարձրութիւններ ծածկւեցին ժողովրդի բազմութեամբ։ Ճանապարհի վրայ կանգնած էին համքարները։ Մէկ ժանից յետոյ երևաց տխուր յուղարկաւորութիւնը։ Ժամը 8-ին նա կանգ առաւ փայտէ կամուրջի մօտ։ Այդտեղ Թագաժառանգ Յեսարեւիչի նշխարքին դիմաւորեց Վրաստանի Էկզարխը բազմաթիւ հոգևորականութեան հետ միասին, ապա դագաղը ձեռքերի վրայ վերցրին Նորին Մեծութեան թիկնապահ գնդի գրէնադէրները և փոխադրեցին կայարանի սգազգած դահլիճը, ուր դիմաւորեցին՝ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, իշխանութիւնները, գեներալները, Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականութիւնը։ Էկզարխի կատարած հոգեհանգստից յետոյ, դագաղը ներս տարւեց վագոն—եկեղեցին։ Կենդանի ծաղիկներից պրոսակ դրւեց Նորին Բարձրութիւն Նիկոլայ Միխայլովիչի կողմից, արծաթէ պսակներ դրւեցին Քութայիսի ազնուականութիւնից, Բորժոմի աւանից, Քութայիսի տեղական հրէաներից, Անդրկովկասեան երկաթուղուց, Կովկասեան հաղորդակցութեան ճանապարհների շրջանից և այլն։ 9 ժամին, ահագին բազմութեան ներկայութեամբ գնացքը ճանապարհ ընկաւ Բաթում։ Ճանապարհը լուսաւորւում էր խարոյկներով։ Յուլիսի 8 ին, առաւօտեան 8 ժամին, արտակարգ գնացքը հասաւ Բաթում։ Մի և նոյն ժամանակ նաւամատոյցի մօտ կանգ առաւ «Георгій Побѣдоносецъ» զրահակիր նաւը, ուր գտնւում էին՝ Կայսրուհի Մարիա Փէոդորովնան, Մեծ Իշխաններ՝ Միխայիլ Ալէքսանդրովիչ, գեներալ—Ծովապետ Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, Ալէքսանդր Միխայլովիչ, Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնա, և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա։ Կայարանում Թագաժառանգ Յեսարեւիչի դագաղին դիմաւորեցին Քութայիսի զինուորական նահանգապետ Գէրշէլման, կոմենդանտ Սոկոլով, գեներալ Օգոն-Դոգանովսկի,

Սանդրիգայո, տեղական իշխանութիւնները, Բաթումի, Քութայիսի, Փոթիի և Օզուրգէթի պատգամաւորութիւնները և բազմաթիւ ժողովուրդ։ Դագաղը կայարանից տեղափոխեցին Թուսաց շոգենաւային ընկերութեան նաւահանգիստը սպիտակ ամպհովանոցակ՝ առանձին յարմարեցրած նաւով։ Ալէքսանդր եպիսկոպոսը հոգեհանգիստ կատարեց, ներկայութեամբ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչի, Կովկասի Կառավարչապետի, Քութայիսի զինուորական նահանգապետի և այլն։ Նաւը, մի փոքրիկ շոգենաւով առաջնորդուած, գնաց դէպի «Георпій Побѣдоносецъ» գրահակիրը, որը թնդանօթաձգութեամբ ողջունեց. նրան պատասխանեցին «Георгій Побѣдоносецъ» նաւը, բոլոր զինուորական նաւերը և ծովափնեայ բատարէաները։ «Георгій Побѣдоносецъ» նաւի վրայ բարձրացրուեց Կայսրուհու դրօշակը։ Երաժշտութեան հնչիւնների ձայնակցութեամբ և թնդանօթաձգութեան որոտումով, ուղեկցութեամբ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչի՝ դագաղն ընդունուեց «Георгій Побѣдоносецъ» նաւի վրայ՝ ներկայութեամբ Կայսրուհու, Մեծ Իշխանների, Մեծ Իշխանուհիների և պալատական պաշտօնեաների։ Պալատական հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեց։ —Առաւօտեան 10½ ժամին «Георгій Побѣдоносецъ» նաւը ճանապարհ ընկաւ դէպի Նովորոսիյսկ թնդանօթների որոտների ուղեկցութեամբ։ — Իշխան Գոլիցին ուղեկցում է մինչև Նովորոսիյսկ «Գրուտ» շոգենաւով։ Մագազինները քաղաքում փակուած են։

Եկատերինոդար։ Այսօր, երեկոյեան 9 ժամին մօտ, Եկատերինոդարով անցաւ Կայսերական գնացքը Օգոստափառ Ընտանիքով, իսկ մի ժամից յետոյ—սգաւոր գնացքը Թագաժառանգ Ցեսարևիչի Նշխարքով։ Կայարանը զարդարուած է։ Դիմաւորեցին հոգևորականութիւնը, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները և բազմաթիւ ժողովուրդ։

Յուլիսի 10-ին, առաւօտեան 6½ ժամին, Նովորոսիյսկից Ռոստովի վրայով անցան՝ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Թագաժառանգ Ցեսարևիչը, Մեծ Իշխաններ՝ Ալէքսէյ Ալէքսանդրովիչ, Նիկոլայ Միխայլովիչ, Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնա և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա, ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարևիչի Նշխարքի ետևից։ Գնացքին ուղեկցում է հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։

Նովոչերկասկ։ Այսօր, առաւօտեան 8 ժամ 48 րոպէին հասաւ սգաւոր գնացքը Թագաժառանգ Ցեսարևիչ Գէօրգի Ալէքսանդրովիչի Նշխարքով։ Կայարանի պլատֆորմի վրայ արքեպիսկոպոս Անֆանասի հոգեհանգիստ կատարեց։ Թագուհի Կայսրուհին աղօթք էր անում վագոնի մէջ հանգուցեալ Թագաժառանգի դագաղի մօտ։ Հոգեհանգստից յետոյ թոյլ տրուեց երկրպագել Ցեսարևիչի Նշխարքին հոգեհանգստեան ներկայ գտնուողներին և ժողովրդին։ Ցեսարևիչի դագաղի վրայ բազմաթիւ պսակներ դրուեցին, որոնց թուում Դոնի շրջանի զօրքի կոմից, ազնուականներից և շրջանի քաղաքներից, Մարիինսկայա ինստիտուտից և ուրիշներից։

Պետերբուրգ։ Թագաւոր Կայսրը յուլիսի 11-ին գիշերը մեկնեց Պետերհոֆից՝ դիմաւորելու ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարևիչի Նշխարքին։

Մոսկուա։ Ցեսարևիչի մարմինը հանգստացնելու տեղերում, Ռիազան, Լիւբերցի, Կուսկովո, սեւաւորուած էին. Կուսկովոյում կառուցուած էր կամար։ Սգաւոր գնացքը սպասում է Պերովոյում, Կազանի երկաթուղու ճանապարհի վրայ, կիրակի։ Մէկ րոպէ կանգ առնելուց յետոյ՝ գնացքը կըշանձնի Կուսկովո։ Երեք րոպէ կանգ առնելուց յետոյ գնացքը կըմեկնի դէպի Մոսկուա։ Հոգեհանգիստ կատարելուց յետոյ գնացքը կուղևորի Պետերբուրգ։

Միլլերովա։ Նովոչերկասկից սկսած՝ ճանապարհին կանգնած էին իւրաքանչիւր հինգ—տասը քայլի վրայ ձիաւոր և հետևակ կազակներ։ Սրտաճմլիկ տեսարան էր ներկայացնում սգաւոր գնացքի անցնելը դաշտով։ Կազակները դադարեցնում էին իրանց դաշտային աշխատանքը, չոքում էին ծնկան վրայ և ծունր դնում. մնաս բարև ասում իրանց սիրեցեալ Թագաժառանգ Ցեսարևիչի, իրանց Առամանի Նշխարքին։ Կայարանում և մերձակայ գիւղերում ժողովուել էր ամբողջ ազգաբնակութիւնը հոգևորականութեան հետ և աշակերտները իրանց ուսուցիչներով՝ ճանապարհ գցելու Նշխարքը և մնաս բարև ասելու Նրան։ «Գլուբոկայա» կայարանում սգաւոր գնացքը կանգ առաւ։ Վեց քահանաներ, շրջակայ գիւղերից, հոգեհանգիստ կատարեցին Ցեսարևիչի դագաղի վրայ, որից յետոյ կազակները երկրպագեցին հանգուցեալի ճակատին։ Սգաւոր գնացքը գնալու միջոցին կայարանումն էին գտնուում Դոնեցկի շրջանի ատաման գնդապետ Կուշնարև, Կամենսկայա ստանիցայի ատաման Պուշչինակի և 34 ուրիշ ատամաններ։ Բոլոր ատամանները լռնած ունէին իրանց ձեռքերում ատամանեան նշանները—գաւազաններ։ Գնացքի գնալուց առաջ, կազակների աղջիկները և տղաները դագաղի վրայ ծաղիկներ ցանեցին։

Կոզլով։ Դիշերուայ ժամի 1-ին «Լիսեի» կայարանը հասաւ սգաւոր գնացքը Թագաժառանգ Ցեսարևիչի Նշխարքով։ Գնացքը գալու միջոցին կայարանում կանգնած էին զօրքեր գեներալ Դոնի առաջնորդութեամբ։ Երբ վագոնը բացուեց, հերթապահութեան համար կանգնեցին օֆիցէրները և զինուորները։ Հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեց։ Հոգեհանգստից յետոյ գեներալ Դոն օֆիցէրների հետ շքեղ պսակ դրեցին։ Բազմութիւնը մինչև գնացքի գնալը երկրպագում էր Նշխարքին։ Դիշերուայ երեք ժամին սգաւոր գնացքը արդէն «Մասլովկա» կայարանումն էր, որտեղ արտակարգ գնացքով եկել էին Վորոնէժից՝ արքեպիսկոպոս Անաստասը, փոխ-նահանգապետը, զինուորական իշխանութիւնները, ազնուականութեան պարագլուխները, զեմստուոյի գլխաւորները, քաղաքագլուխը, վաճառականների ներկայացուցիչը, և շատ անւանի կալուածատէրեր։ Կայարանը, չընայած գիշերուայ ժամանակին, լիքն էր բազմութեամբ, որը շատ սպասում էր Թագաժառանգ Ցեսարևիչի Նշխարքի գալուն։ Արդէն լուսանում էր, երբ արքեպիսկոպոս Անաստասի ժողովուած հոգևորականութեան հետ սկսեց հոգեհանգիստ կատարել։ Դագաղի մօտ հերթապահ կանգնեցին տեղական զօրքի օֆիցերները և զինուորները։ Ջուտով գիշերուայ լռութեան մէջ տարածուեց «Вѣчная память» թաղման երգի ձայնը։ Տիրեց հանդիսաւոր րոպէն։ Ամենքը, իբրև մի մարդ, չոքեցին, թափուեցին

արտասուքները։ Գնացքի գնալուց առաջ արքեպիսկոպոս Անաստասի Ս-ր-հնեց մարմինը. ամենքը երեսները խաչակնքեցին ու գնացքը շարժուեց։ Ժամի 7-ին գնացքը կանգ առաւ «Գրեազի» կայարանում, որտեղ ժողովել էր բազմաթիւ ժողովուրդ։ Հոգևորականութիւնը դուրս էր եկել ընդառաջ և հոգեհանգիստ կատարեց, որից յետոյ պսակներ դրին դագաղի վրայ։

Նիկիֆիռնս։ Կոզլովից մինչև Բեաժշկ կանգնած էր բազմաթիւ ժողովուրդ։ Աչքի էին ընկնում գեղջկուհիները իրանց տեղական հագուստով, կոյսերը և ուխտագնացները։ Ամեն տեղ, ուր կանգ էր առնում սգաւոր գնացքը, ժողովուրդը երկրպագում էր Նշխարքին, առաւել «Բեաժսկ» կայարանում, որտեղ սպասում էին՝ տեղական հոգևորականութիւնը, զեմստուո'ի գլխաւորը, քաղաքագլուխը, պատուաւոր ծերունի Ուշակով՝ ձայնաւորների հետ։ Ծաղիկներով զարդարուած կայարանում կանգնեց Բեաժսկի հրդեհաշէջների խումբը։ Գնացքը հասնելուց յետոյ, դագաղի մօտ հոգեհանգիստ կատարուեց, որից յետոյ քաղաքագլուխը և հրդեհաշէջների գլխաւորը դագաղի վրայ շքեղ պսակներ դրեցին։ Ապա թոյլատրուեց ժողովրդին՝ երդ-պագելու նշխարքը։ Կէսօրին մօտ սգաւոր գնացքը ճանապարհ ընկաւ Բեազանն, որ հոգեհանգիստ է նշանակուած։

Մոսկուա։ Հոգեհանգստին ներկայ լինելու համար գեներալ-նահանգապետի կարգադրութեան մէջ յայտարարուած է, որ սգաւոր գնացքը Թագաժառանգի նշխարքով կըգայ Նիկոլաևսկայա ճանապարհին երեկոյեան 9 ժամին։ Թագաժառանգի դագաղի վրայ պսակներ կըդրեն Բեազանի նահանգի քաղաքացիական վարչութիւնից, Բեազանի դումայից, զեմստուօից, Կազանի երկաթուղու ընկերութիւնից։ Փոթի, Թիֆլիս, Բաթում և Բեագան քաղաքներից։

Պետերբուրգ։ Թագաւոր Կայսրը դիմաւորեց գնացքին հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարևիչի նշխարքով յուլիսի 11-ին «Կուսկովո» կայարանում, բարեհաճեց անցնել սգաւոր գնացքը և Մոսկուա ճանապարհուել Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի և Նոցա Բարձրութիւնների հետ։

Մոսկուա։ Երեկոյեան 9 ժամին սգաւոր գնացքի Կայսերական պաւիլիոնին մօտենալու ժամանակ, մայրաքաղաքների բոլոր զանգակատներում սկսուեց տխուր զանգահարութիւն մինչև սգաւոր գնացքի Պետերբուրգ ճանապարհուելը։ Ցեսարևիչի նշխարքի հասնելու ժամին, մայրաքաղաքի բոլոր տաճարներում հոգեհանգիստներ կատարուեցին։

Մոսկուա։ Կայսերական պաւիլիոնում տեղի ունեցած հոգեհանգստին հաւաքուեցին բարձր իշխանութիւնները և պալատականները. ժամանեց Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ իր ամուսնով։ Երեկոյեան 9 ժամ 5 րոպէին մօտեցաւ սգաւոր գնացքը, որի մէջ գտնուում էին՝ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Թագաժառանգը և ուրիշ Բարձրագոյն Անձինք։ Գնացքի մօտենալու ժամանակ պատուաւոր պահակախումբը զինուորական պատիւ տրուեց։ Վագոն-սալոնը մտաւ Մեծ Իշխան Սէրգէյ Ալէքսանդրովիչ և դուրս եկաւ Թագաւորը բարևեց պատուաւոր պահակներին և Նորին Բարձրութեան և Մեծ Իշխանուհի Ելիսաւէտա Ֆէօդորովնայի հետ կրկին մտաւ վագոնը։ Վագոնը Ցեսարևիչի դագաղով բացուած էր։ Միտրոպոլիտը հոգեհանգիստ կատարեց։ 10 ժամին սգագնացքը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

Պետերբուրգ։ Յուլիսի 12-ին, ժամի 6-ին, Նիկոլաևեան կայարանը ժամանեց սգաւոր գնացքը. ժամանելուց յետոյ Պետերբուրգի միտրոպոլիտը հոգեհանգիստ կատարեց։ Ապա գեներալ-ադիւտանտները և գեներալ-մայորները վերցրին դագաղի վրայից ծածկոցը։ Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխանները դուրս բերին դագաղը և դրին դիակառքի վրայ։ Հանդէսը շարժուեց կանխապէս որոշուած ցերեմոնիայի համեմատ։ Մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում սկսեցին զանգահարել, Պետրոս-Պաւլովսկ ամրոցից սկսուեց թնդանոթաձգութիւն։ Տխուր դիակառքի յետևից գնում էին՝ Թագաւոր Կայսրը, Դանիայի դուքս Վալդէմար, Մեծ Իշխաններ դուքս Ալբերտ-Ալտենբուրգ, Բարձրագոյն անձեր, Կայսրի շքախումբ. ապա սգաւոր կառքերով հետևում էին. Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա և ուրիշներ։ Ամբողջ ճանապարհի վրայ կանգնած էին զօրքերը։

Պետերբուրգ։ Ի Տէր հանգուցեալ Թագաժառանգ Ցեսարևիչի թաղումը կատարուեց յուլիսի 14-ին, առաւօտեան 10½ ժամին, Պետրոպաւլովսկի տաճարում։

ԸՆԹԱՑԻԿ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԿՈՆԳՐԷՍԸ

Քառասուն անդամներէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմուած է նոր կամ ընթացիկ լեզուներու (longues vivantes) համաժողով (congres) մը կազմելու 1900-ի ցուցահանդէսին ժամանակ։ Այդ ժողովն տեղի պիտի ունենայ 1900-ի յուլիս ամսոյն 24-էն 28-ն։

Ժողովն երեք բաժանում պիտի ունենայ։

Առաջին բաժանումին մէջ հետևեալ խնդիրներն պիտի ուսումնասիրեն։ 1) Մանկավարժական սկզբունքներ, որոնց համեմատ նոր լեզուներն սորվեցնելու է 2) ինչպէս սորվեցնելու է բերանացի կամ գրաւոր կերպով, գրքի գործածութիւնն, 3) պատկերներ և իրերու դասեր, ընդհանուր վարժութիւն, երգ և այլն, 4) քերականութեան ուսումն. 5) գրական զարգացում, 6) հաստատութիւն, որոց մէջ նոր լեզուներն սորվեցնելու է, մեթոդի փոփոխութիւնն ըստ հաստատութեան, և տղոց տարիքին ու զօրութեան։

Երկրորդ բաժանումն պիտի ուսումնասիրէ ինչ որ կրվերաբերի նոր լեզուների տեխնիկական և վաճառականական ուսման, այսինքն՝ 1° այս ուսմանց յատուկ մասնաւոր մեթոդներն, 2° խօսակցութիւնք, բանախօսութիւնք, գրական և երաժշտական երևոյթք, թատրոնական ներկայացումնք, համախմբի (chorale) ընկերութիւնք և այլն... 3° ընթերցանութեան սրահներ, գրադարաններ, բազմախօս ակումբներ և այլն։

Երրորդ բաժանումն պիտի զբաղի միջազգային յարաբերութիւններն դիւրացնելու միջոցներուն վրայ. 1° ճանապարհորդութիւն և օտար երկրի մէջ մնալու ռոճիկ, 2° զանազան երկիրներու մէջ աշակերտների փոփո-

խութիւն, 3° բազմալեզեան դրագարանների հաստատութիւն, թերթերի և հանդէսների փոփոխումն, 4° միջազգային թղթակցութիւնք. 5° միջազգային լեզուի մը օգտակարութիւնն. 6° տարածման միջոցներն։

Այդ ժողովին անդամ կըլլինին ա. նոնք որ իրանց անունն կուղարկեն, նոյնպէս նաև 5 ֆրանկ յանձնախմբին գանձապահին։ Տիկիններն ևս կընդունուին։

Այդ ժողովին վերաբերեալ բոլոր տեղեկութիւններն ստանալու համար դիմելու է հետևեալ հասցէին՝ Secretaire genéral de la commission d'organisation i l'Hôtel des Sociétés Savantes, 28 Rue Serpente, Paris.

A. Saissy և Մելիք Ս. Դաւիթ-բէկ

ԸՆԴՐԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ոմանք չար գուշակութիւններ էին արել երիտասարդ Գալֆայեանի մասին, որ գնացել է Պարիզ դերասանական արուեստն ուսանելու։ Հակառակին այնտեղից նրա մասին բարի լուրեր էին գալիս, այն ինչ սրանց հարկաւոր էր մի գոյժ, մի անյաջողութիւն, որ փառաւորին։ Եւ ահա պատեհ առիթ գտան։ Մայիսի 1-ին Գալֆայեանը Օթէլլոյի մէջ խայտառակուեց Պարիզում...

Մեզ ու ձեզ մեծ աւետիք։ Սկսեցին հրճուել, գրել ու պարծենալ, թէ իրանք ինչ մարգարէներ են, միշտ խելօք բաներ են ասում, բայց լսող չկայ... Եւ դեռ իրանց հրճուանքն ու հայհոյանքը չվերջացրած, Մուրճի աշխատակից պարոն Սևեանը խրոխտալով կանչում է. «Այժմ եկաւ, հասաւ ժամանակը, երբ «քարերն» անդամ սկսան ապուպակել (?), աշխարհին գուժելով հայ բեմի, հայ դեղարուեստի անունը ցեխի հասասարեցնող իրողութեան մասին (Պարիզում ներկայացրած Օթէլլոյի մասին է մեր խօսքը)։ Այդ նոյն մեզ անպատուող, անարգող, «բթամիտ» յորջորջող պարոնը (այսինքն ես) ռիկ մնջիկ, անտարբեր (?) իր քնարը է լարում (?), չունենալով իր սիալած լինելը հրապարակով, մամուլի միջոցով յայտնելու քաղաքացիական քաջութիւնը»։ (Մուրճ № 6, էջ 699)։

Զատ էք վռազում, պ. Սևեան։ Ես գիտէի, որ դուք բոլորդ տօն էիք կատարելու. վերջին էի սպասում։ Հէնց նոր դուրս եկաւ Մուրճը ձեր դատավճռով հանդերձ և ահա ես ձեր առաջ։ Ամենքիդ մի քանի խօսք ունիմ ասելու։

Պ. Սևեան, ես տեղեկացայ, որ դուք դերասան էք։ Ձեր ծանկանունը բաց չեմ անում և խոստովանում եմ, որ, յիրաւի, դուք փորձառու և շնորհքով դերասան էք։ Բայց, չընայելով ձեր փորձառութեան և շնորհքին, վերջերս հայոց բեմի վրայ խայտառակեցիք Ճէքսպիրի մի դրաման և այդ մասին բողոքներ տպեցին մեր լրագիրներում։ Այս հանգամանքը յիշելով ես ձեզ նուաստացնելու դիտաւորութիւն չունիմ, այլ միայն ուզում եմ ձեզ հետ այսպէս խօսել և հարցնել։ Պ. Սևեան, դուք, որ միշտ թատրոնի մէջ էք ապրում, ներկայացնում ու ներկայացումների մասին էք գրում, քաջ գիտէք և չէք կարող չըխոստովանել, որ բեմի համար նոյն իսկ շատ կարևոր, փորձուած ու հուչակ ունեցող դերասաններ (ինչպէս դուք) միշտ պատահում է, որ տապալում են ոչ թէ Օթէլլո, Մակբէթ ու Ճէյլոկ, այլ և շատ հասարակ դերեր, այն էլ Բագրի ու Թիֆլիսի բեմի վրայ մեր բեցենդենտների առջև։ Արդ, ասացէք խնդրեմ, ձեր որոշումին հետևելով, եթէ ամեն մի անյաջող ներկայացում համարենք համաշխարհային գոյժ ու հայ գեղարուեստը ցեխի հետ հաւասարեցնող իրողութիւն և այնպէս դատենք ու դատապարտենք, ինչպէս դուք էք անում Գալֆայեանի վերաբերութեամբ, որ անկարող է հանդիսանում Պարիզ, Օթէլլոյի մէջ, Սարսէի առջև, այն էլ իբրև սովորող, $1^1/_2$ տարուայ դնացած աշակերտ, ասացէք խնդրեմ, ինչպէս վարուեք վերև յիշած փորձառու տապալողների հետ։ Խնդրում եմ այս մասին մի փոքր մտածէք, և եթէ կըմնաք ձեր յայտնած կարծիքի վրայ՝ որոշեցէք ձեր ու սրանց պատիժը։ Հէ որ դուք աւանձին արտօնութիւն չունէք Ճէքսպիրը տապալելու և հայ գեղարուեստը ցեխի հաւասարեցնելու։ Իսկ ինչ վերաբերում է ամիշային, այդ, յիրաւի, շատ պարսաւելի երևոյթ է, որ դարձեալ չի հերքում, թէ նա դերասանական շնորհք ունի։

Գալով պ. Հոպանեանին, պէտք է ասել, որ այդ մարդը շատ թեթև է դատել սկզբում և շատ թեթև էլ դատապարտում է այժմ։

Նա ասում է, տարի ու կէս առաջ եկաւ Պարիզ և «... հակառակ իր աներևակայելի տգիտութեան, արտասանութեան արմատական թերութիւններին և յիշողութեան հիւանդագին պակասութեանց (?), մենք անոնցմէ եղանք, որ սիրեցին հաւատալ, թէ կանոնաւոր ու երկարատև աշխատութեամբ մը այդ երիտասարդը պիտի կարենար իր թերութիւնները սրբագրել և կրթուած ու կազմուած Թիֆլիս դառնալ, այնտեղ սկսելու իր դերասանական ասպարէզը»։ (Անահիտ, մայիս, էջ 220)։

Պ. Հոպանեան, այդքան թերութիւններ նկատեցիք, շատ լաւ. հապա ինչ արժանիք տեսաք, որ սիրեցիք հաւատալ թէ նա բան է դառնալու։ Ասում էք «սիրուն դլուխ մը ունէր». միթէ կարծում էք ամեն մի սիրուն գլուխ ունեցող երկարատև աշխատութեամբ մը կարող է ողբերգու դերասան դառնալ։ Զատ թեթև էք դատել։

Երբ եկաւ այդ երկարատև աշխատութիւնը, որ ձեր յոյսերն ի դերև ելան, և հետաքրքրական է իմանալ, այժմ էլ այն կարծիքին էք, որ երկարատև աշխատութեամբ նա լաւ դերասան կըդառնայ։ Վերջապէս ձեր աչքի առաջ նախքան Օտէլլոն՝ Համլէտի մէջ դուրս եկաւ։ Եթէ այնտեղ դիմացաւ և ճիշտ էր այն հիացումը, որ յայտնեցին այնքան մարդիկ ու լրագիրներ, միթէ այդ ոչ մի արժէք չունեցաւ ձեր աչքում և ինչու չէք խօսում նրա մասին, միայն այժմ էք Սարսէին խնդրում, որ այդ յանցանքի համար ների հայութեանը...

Գանք Մշակին։ Իսկ դուք, գրում էք «շատ է պատահել, որ Մշակը համեստութեան դասեր է տուել (Տէր ողորմեա) այս կամ այն անձին կամ հիմնարկութեանը, բայց ինչ։ Միկրոսկոպիական ընդունակութիւնների տէր մարդիկ միշտ կատաղել են մեր դէմ, ասելով թէ մենք այսպէս խօսում ենք չկամութիւնից, թէ մենք պիտի խրախուսենք, բարձրացնենք ամեն մէկին, որ շնորհք է ցոյց տալիս, թէ մենք մի շատ տարօրինակ սովորութիւն ունինք հալածելու և այն (Մշակ 1899, № 86) և առաջ էք

բերում «Ձաsերից մի օրինակ» — Գալֆայեանին։ Բայց սա դեռ օրինակ չի, պարոններ, սա դեռ վէճ է։ Օրինակը կատարուած, վերջացած իրողութիւնն է։ Ես՞ ձեզ ցոյց կրտամ, տեսէք որն է օրինակը և թէ ինչ իրաւունք է ձեռք բերել Մշակը։ Ահա ձեզ «շատերից մի օրինակ»։

Առաջին անգամ երբ Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտէտը վճռեց Պոլսից բերել Ադամեանին, օր. օր. Աստղիկին ու Սիրանոյշին, Մշակն այսպէս սկսեց իրան դասը. «Մենք... չենք ընդունում կոմիտէտի մէջ այդ աստիճան անհասկացողութիւն, անգործնականութիւն և կարճատեսութիւն»։ Մենք չենք հասկանում, ասում է, թէ ինչպէս կարելի է Պոլսից դերասաններ կանչել, նրանք ուրիշ ուղղութիւն ունին, ուրիշ բարբառով են խօսում. «նրանց ուղղի զարգացումը թեթև, վայր ի վերոյ է» և այլն (Մշակ, 1879, № 98, առաջնորդող—Մենք չենք հասկանում)։

Երբ որ տեսնում է իրան չեն լսում և այսուամենայնիւ բերում են, բարկանում է, հայհոյում, թէ Մշակը դասեր է տալիս, բայց չեն լսում, տգէտ, յանդուգն, անընդունակ մարդիկ հասարակաց փողերը վատնում են և այլն։ Ամբողջ մի տարի Պոլսից եկած դերասանն ու դերասանուհիները Թիֆլիսի բեմի վրայ խաղում են, ռուսաց թերթերը գովում են, ժողովուրդը հրճւում է, իսկ Մշակը քամահրում։ Հետևեալ տարին էլ թատրոնական մասնաժողովի հաշիւը քննելիս Մշակը գտնում է, որ շատ են ծախսել պոլսեցի դերասանին ու դերասանուհիներին բերելու և պահելու համար և գոչում է. «Ահա, այսպէս են վարուում հասարակաց փողերի հետ... «բերուած դերասանուհիները կամ դերասանը (այսինքն օր. օր. Աստղիկը, Սիրանոյշն ու Ադամեանը) այնքան հազուագիւտ արարածներ չէին... Պոլսի մէջ նրանց նմանները այնքան շատ են, որ ամսական 100—150 ր. ռուբլիների անունը լսածին պէս իրանք վազ կրտային և կրգային։ Նոյնիսկ այժմեան թատրոնի հանճարը, թադն ու պարծանքը (հեգնում է) պ. Ադամեանը, մի քանի տարի սրանից առաջ վարձուած էր Նոր-Նախիջևանում, որպէս լսել ենք ամսական 25 ռուբլով և այլն (Մշակ 1880. № 50. Թիֆլիսի հայոց թատրոնական մասնաժողովի հաշիւը)։ Տեսնում էք ինչ սրտացաւութիւն, տնտեսութիւն է քարոզում։ Ադամեանին եթէ 100 ռուբլու փոխարէն ամսական 25 ր. տային, թատրոնն օգուտ կունենար, չէ՞... բայց մեր խօսքը շարունակենք։ Մշակը Ադամեանին, «Կոյր» պիեսայի մէջ քննադատելով և հաւատացնելով, որ «ոչ մի օրինաւոր դերասան չի համաձայնուի խաղալ «Կոյրի» պէս մի արուեստական՝ պիեսի մէջ, խորհուրդ է տալիս խաղալ Ձիլլերի, Ձէքսպիրի և Գեօթէի դրամաները «...սրանց նման գրողների պիեսները տեսնելով, հասարակութիւնը, ճշմարիտ է նոր, ժամանակակից, օրական խնդիրների հետ չի ծանօթանալ, բայց կրթելով ընդհանուր մարդկային գաղափարների մէջ, կընդունի այդ գաղափարները գեղեցիկ և կատարեալ ձևերի միջոցով (Մշակ 1880. № 10, հայոց թատրոն)։

Հէնց նոյն տարին Ադամեանը խաղում է Համլէտ։ Մշակը գտնում է, որ Ադամեանը թէև տեղտեղ լաւ էր, բայց Ձէքսպիրի Համլէտը չէր ներկայացնում, և տեսէք հետն էլ ինչ դաս է տալիս. «Երբ մի հասարակութեան բեմի վրայ դնում է Համլէտ, այդ հասարակութիւնը պէտք է այնքան զարգացած լինի, որ կարողանայ ըմբռնել Համլէտի ոգին, որ կարողանայ հասկանալ պիեսայի մէջ գրած իւրաքանչիւր նախադասութիւնը, իւրաքանչիւր բառը և իւրաքանչիւր շեշտը»։ (Մշակ 1888, № 212, հայոց թատրոն)։

Մշակը գտնում է, որ Ադամեանը խաղում է անբնական, արուեստական, տգեղ կերպով։ Լիւսի Դիգիէ պիեսան ներկայացնելուց յետոյ ռուսաց Кавказъ թերթը գովում է և մի բժիշկ, որ շատ խելագարներ է ուսումնասիրել ու բժշկել, ռուսաց թերթում վկայում է, որ Ադամեանը այդ պիեսում խելագարի տիպը շատ ճիշտ ու բնական է ներկայացրել։ Մշակն ասում է յրգիտենք, որքան ճշմարիտ է նկատել գժերի բժիշկը, մեզ այդպէս չի թւաց, և եթէ մի տեղ լաւ է խաղացել Ադամեանը, «այդ պատահմունք է միայն»։ Ապացուցանում է, որ երկու տեսակ տաղանդներ կան, մէկը տանելի, միւսը անտանելի, և գտնում է, որ Ադամեանը իսկի անտանելի, տաղանդ էլ չի։ Ասում է «նրա անբնական շարժումները, մատների ծռելը, աչքերի յռելը, անհաստատ քայլելը, ձեռքերի դողալը, բոլորը մեր ասածների ապացոյցներ են» (Մշակ, 1879 № 224)։

Ի նկատի առէք, որ այս ժամանակ Ադամեանը մի նորելուկ չէր և արդէն այնպէս հսկայաբար էր առաջ գալիս, որ նոյն իսկ Մշակը ստիպուած պէտք է խոնարհէր, լեզուն փոխէր և այսպիսի բաներ գրէր. «պ. Ադամեան արդէն վաղուց (իմա երբ մենք հայհոյում էինք) սիրելի է դարձել մեր հասարակութեանը (որին նոյնպէս հայհոյում էինք թէ ինչու են ծափահարում) և աւելորդ է նկատել, որ երբ Ադամեանը բեմի վրայ է, ամբողջ հասարակութիւնը դրաւվում է նրանով» և սրա նման բաներ ու ЗАДНЫМЪ ЧИСЛОМЪ փայփայանքներ։ Ահա ձեր Մշակի հռչակաւոր դասերից մէկը, որ սկսել է «Մենք չենք հասկանում» խորհրդաւոր խօսքերով, որոնք այսօր, երբ որ ամեն բան կատարել է վերջացել, սև, խոշոր տառերով դրոշմուած՝ Մշակի վրայ ծանրանում են իրանց իսկական նշանակութեամբ, անմերժելի ապացուցանելով նրա տաղանդներ որոշելու և նրանց դաւեր տալու անընդունակութիւնը։

Ահա ձեզ «ձաsերից մի օրինակ», պարոններ։ Ահա ձեզ մի նմուշ, թէ ինչպէս է դաս տալիս Մշակը և որքան հոտառութիւն ունի տաղանդ ճանաչելու և գնահատելու։

Դուք ոչ թէ տաղանդներին վկայականներ ու դասեր տալու իրաւունք պէտք է վերապահէք ձեզ, այլ դեռ պէտք է ճգնէք ապացուցանելու, որ ձեր անբարեխղճութիւնը մի որ և է սահման ունի։

Եթէ դուք հաւատում էք Պոլսի թերթերին և այնտեղից հրճւանքով արտատպում էք Գալֆայեանի անյաջող Ոտէլլոյի լուրն ու եալլի պարուն, ուրեմն էիք, երբ նոյն Գալֆայեան յաջող դերս եկաւ Համլէտի մէջ և այնքան գովեցին գրեթէ ողջ Եւրոպայի թերթերը—Պոլսինն էլ հետը։ Դուք խիղճ ունէք։

Խօսքիս վերջում զարմանքս յայտնում եմ Մուրճի խմբագիր պ. Արասխանեանին, որ կարծում է թէ ես բաւականաչափ չեմ գնահատած Մուրճում, նրա համար եմ Մուրճին հակառակ կարծիք յայտնում Գալֆայեանի մասին (Մուրճ. № 5)։

Յովհաննէս Թումանեանց

գիտական

Ջրաբաշխական

ԱՒՏՕ-ԷԼԵՒԱՏՈՐՆԵՐ

Լ. Խան-Աղեանի

—

Կան մեքենաներ, որոնք դրելով գաւիվայրից վազող ջրերի մօտ, առանձին խցանների միջոցով ջուր են վեր բարձրացնում։ Բայց չընայելով, որ այդ մեքենաները մի ամբողջ դար գոյութիւն ունին, այնուամենայնիւ շատ չեն տարածւում, որովհետև բարդ կազմութիւն ունին և ջուր շատ քիչ են տալիս։ Բաւական է ասել, որ այդ մեքենաները երկուսից մինչև հինգ հատ և աւելի խցաններ (клапанъ) ունին և թէ դրանց իւրաքանչիւրը մէկ օր ու գիշերուայ մէջ բացւում և փակւում է 100,000-ական անգամից աւելի։ Այս հանգամանքը գլխաւոր պատճառներից մէկը պէտք է համարել, որ հնարաւորութիւն չի տալիս մեծ տեսակի մեքենաներ շինելու, որովհետև սրանք ջարդւում են խցանների ուժգին հարուածներից։

Այս ամեն անյարմարութիւնները բոլորովին վերացուած են այժմ հնարուած աւտօ-էլեւատորի մէջ, որը բանում է միայն մի պարզ խցանի միջոցով. իսկ միւս խցանները փոխարինուած են ռէտինէ անցքով (вентиль), որը իր առանձին կազմութեան շնորհիւ ազատ դուրս է թողնում իր միջից նոյն իսկ պղտոր ջուր, բայց արգելում է վերադարձ հոսանքը, այն ինչ խցանները ամեն մի փակելու միջոցին յետ են մղում քաշած ջրի մի մասը և զգալի կերպով պակասցնում են բարձրացող ջրի քանակութիւնը։ Փոխարինելով խցանները ռէտինէ անցքերով, հնարաւոր է դարձել մէկ ջրմուղի (нагнетательная помера) տեղ երկուսը շինել և դրանով, կրկնապատիկ աւելցնելով մեքենայի արդիւնքը։ Այս առաձգական ռէտինէ անցքերն այնպէս են յարմարեցրած, որ ազատ են զանազան շարժումներից և տրորուելուց։ Այսպիսով վերջանում են՝ վնասակար դադրոցը, հարուածներն ու զարկերը։ Ահա թէ ինչի աւտօ-էլէւատորները իրանց կազմութեամբ ամենազօրեղը, դիմացկունութեամբ ամենաամուրը և արդիւնքով ամենաշահաւէտն են բոլոր տեսակի ջուր բարձրացնող մեքենաների մէջ։

Ունենալով աւտօ-էլեւատորների այս առաւելութիւնները և գիտենալով որ նրանք երկար տարիներ բանում են առանց որևէ խնամք պահանջելու կամ ծախք պատճառելու, առաջարկում ենք գործ դնել՝ կալւածներին, ամարանոցներին, բնակարաններին, քաղաքներին և գիւղերին ջուր տալու համար. շատրուաններ և ջրվէժներ կանգնացնելու, դաշտեր, պարտէզներ, բանջարանոցներ, այգիներ, բամբակի, ծխախոտի և այլ ցանքսեր ջրելու, որպէս լաւ միջոց դատարկ և ամայի տարածութիւնները արդիւնաբեր դարձնելու. վերջապէս ջուր բարձրացնել՝ ջրաղացներ և գիւղատնտեսական մեքենաներ բանեցնելու համար և այլն, և այլն, և այլն։

—

Աւտօ-էլեւատորի կազմութիւնը

Գաւիվայրից թափւող ջուրը H խողովակով վազում է B ամանի մէջ, փակում է իր թափով c խցանը և ուրիշ ելք չունենալով, բաց է անում ռէտինէ e,e անցքերը և մտնում է A,A ջրմուղների մէջ, որոնցից օդի ճնշումով վերև է բարձրանում h խողովակով։ Երբ ջրի մի մասը անցնում է A,A ջրմուղները, պակսում է B ամանի մէջ մնացած ջրի ոյժը և իսկոյն k լծակի ծանրութիւնից բացւում է c խցանը։ Նորից ընթացք է ստանում ջուրը H խողովակի մէջ, դարձեալ փակում է c խցանը և մտնում A,A ջրմուղների մէջ և այսպէս անվերջ։

Աւտօ-էլեւատորի յաջող բանելու համար հարկաւոր է, որ ջուրը հնար եղածին չափ մեծ բարձրութիւնից թափւի, այսուամենայնիւ այդ բարձրութիւնը ուղղաձիգ չափով կէս արշինից աւելի և ոչ պակաս պէտք է լինի, և որքան բարձր է ջրի անկման մակերևոյթը, այնքան աւելի ջուր կարելի է բարձրացնել։ Օրինակ եթէ մի արշին բարձրութիւնից ընկնող ջրից մեքենան մէկ ժամուայ մէջ 20—30 վեդրոյ է հանում 30 արշին բարձրութեան վրայ, երեք արշին բարձրութիւնից կըտայ 80—100 վեդրոյ. 7—8 արշինից՝ 200—250 վեդրոյ և այլն։

Իսկապէս ասած մի առանձին հարկաւորութիւն չըկայ որ ջուրը մի որևէ բարձրութիւնից թափւի ներքև, այսինքն ջրվէժ կազմի. այլ անհրաժեշտ է կամ սրընթաց, վազող լինի, կամ այնտեղը, որտեղից կամենում են ջուր բարձրացնել, դիրքով աւելի բարձր լինի ջրի շարունակութեան որևէ կէտից, ուր կորչելու է c խցանից անօգուտ թափւող ջուրը։

Ջուր առնելու և թափելու տարածութեան բարձրութիւնը չափում են ուղղահայեաց (ah)։ Միևնոյն կերպով են չափում և այնտեղի բարձրութիւնը (ed) ուր տանելու են ջուրը։ Իսկ տեղի հեռաւորութիւնը ջրից և մակերևոյթի անհարթութիւնները ոչ մի նշանակութիւն չունեն։

Մեքենայից ջուր վեր բարձրացնող խողովակները դարսում են գետնի երեսին, ցածացնելով փոս և ձոր տեղերում և բարձրացնելով քարափների և բլրակների վրայ։ Եթէ մեքենան բանելու է և ձմեռը, խողովակները տրաքելուց պահպանելու համար հարկաւոր է տանել գետնի տակով, իսկ մեքենան դնել յատուկ շինած փոսում կամ գետնատնում։

Աւտօ-էլեւատորը, ինչպէս տեսանք ջուր է բարձրացնում ջրվէժներից և գաւիվայրից վազող ջրերից, բայց հարկաւոր է լինում ջուր վերցնել և ջրհորներից, հանդարտ հոսող ու կանգնած ջրերից. այսպիսի դէպքերում գործ են ածում սիֆոնի կազմութիւն ունեցող աւտօ-էլեւատորներ։

—

Դպրոցական

Լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին. «Ի կատարումն Բարձրագոյն կամքի, ես, խորհրդակցելով ուսումնարանական շրջանների հոգաբարձուների և բարձրագոյն դպրոցների կառավարիչների հետ, հնարաւոր համարեցի զիջողութիւններ անել ներկայ տարում անկարգութիւններին բոլոր մասնակցողներին, բացի մի քանիսներից, որոնց բարձրագոյն դպրոցներում մնալը կարող է վնասակար համարել և որոնք այդ պատճառով չեն ընդունուի ոչ մի բարձրագոյն դպրոցներում։ Իսկ բոլոր մնացածները, որոնք արձակուած են բարձրագոյն դպրոցներից, կըբաժանուեն

երկու մասի՝ 1) նրանք, որոնք կարող են ընդունել նորից միևնոյն դպրոցը ներկայ տարեայ օգոստոս ամսին, եթէ բարձրագոյն դպրոցների տեղի պակասութեան կամ մի որևէ ուրիշ հանգամանքների պատճառով՝ այդ կարգի բոլոր ուսանողները չէրկարողանան ուսանողների թւում ընդունել, այն ժամանակ կարելի է նրանց թոյլ տալ ուսանող հաշուել եկող տարեայ յունուարի 1-ից կամ թոյլ տալ քննութիւն տալ 1900 թւի մայիսին, քննութիւնից յետոյ ուսանողների թւում հաշուելով նրանց. 2) նրանք, որոնք կընդունեն միևնոյն դպրոցը 1900 թւի օգոստոսին, սրանց թւում հաշուում են և նրանք, որոնք անկարգութիւնների ժամանակ արձակուած են եղել դպրոցից առանց իրաւունք ունենալու մտնել որևէ ուրիշ դպրոց, եթէ ժողովուած տեղեկութիւններից կըյայտնուի, որ նրանք վատ ազդեցութիւն չեն ունենալ ընկերների վրայ և ուսումնական պարապմունքների կանոնաւոր ընթացքի վրայ։ Կարգերի բաժանելու իրաւունքը ես թողնում եմ ձեր գերազանցութեան հայեցողութեան, խորհրդակցելով ուսումնարանական իշխանութեան և տեղական ադմինիստրացիայի հետ։ Նրանք ամենը, որոնք ցանկանում են ընդունել, պարտաւոր են խնդիրք տալ այն դպրոցին, որտեղից արձակուած են եղել և այդպիսիներին յայտնել, որ եթէ միւս անգամ մասնակցեն այդպիսի անկարգութիւններին, կարձակուեն, առանց իրաւունք ունենալու մտնել մի որևէ ուրիշ դպրոց»։

ԼՈՒՐԵՐ

Յուլիսի 15-ին, ի Տէր Հանգեալ Թադաժառանգ Ցեսարևիչի թաղման առիթով, որ տեղի ունեցաւ յուլիսի 14-ին, Սիօնի մայր տաճարում, Հայոց և միւս դաւանութիւնների եկեղեցիներում կատարուեցաւ պատարագ և ապա հոգեհանգիստ։ Ներկայ էին շատ բարձրաստիճան անձինք և խուռն բազմութիւն։

—

Վեհ-փառ կաթուղիկոսը իր սրբազան կոնդակով, որի պատճէնը տրպուած է Արարատում, պատուիրում է թէ ինչ ձևով պիտի կատարել Գէորգեան ճեմարանի 25-ամեայ տօնախմբութիւնը։ Կազմուելու է յանձնաժողով ճեմ. ուսուցիչներից Ս. արքեպ. Պարզեանի նախագահութեամբ։ Յանձնաժողովը կը ժողովի ճեմ. պատմութեան նիւթերը, կը կազմի 5-ամեայ ուսումնական գործունէութեան տեղեկագիր, եղած ծախսերի մանրամասն հաշիւը, կը կազմի, հին և նոր աշակերտների ցուցակը թէ նրանցից որոնք են պարապում ուսուցչութեամբ և որոնք նիւրել են, իրանց եկեղեցուն և ցուցակագրել բարերարների անունները և նրանց նուիրատուութիւնները։ Տօնը կը կատարուի առաջիկայ աշնան, Ս. Գէորգի տօնի օրը, երբ առհասարակ տօնում է ճեմ. տարեդարձը։

—

Մայրաքաղաքի լրագիրների տեղեկութեանց նայելով, ներկայացումներ և զարճութիւններ յուլիսի 15-ից տեղի չեն ունենալ։

—

Յուլիսի 12-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը տեղի չունեցաւ, այն պատճառով, որ եկել էին նիստին միայն 21 հոգի։ Եթէ այսուհետև չը ժողովուեն օրինական թւով պահանջուած իրաւասուներ, այն ժամանակ չրվճռուած հարցերը ենթարկուելու են նահանգական ատեանի իրաւասութեան, որը կը քննի և որոշումներ կը կայացնի։

—

Օգոստոսի վերջին կամ սեպտեմբերին կայս. գիւղատնտեսական ընկերագործութեան բաժանմունքը Դիլիջանում կը բանայ ցուցահանդես-մրցումն մեղուաբուծութեան։ Արդէն նախնական աշխատանքների համար Դիլիջան է գնացել այդ ընկերութեան ներկայացուցիչներից մէկը։

—

Յունիսի 13-ի քաղաքային գործերի նահանգական ժողովում, ի միջի այլոց քննութեան ենթարկուեց քաղաքային դումայի վճիռը, որ վերաբերում է fաուշակի յեs գնելուն Անոնիմ ընկերութիւնից և ուրիշներին տալու շահագործման։ Քաղաքային դումայի վճիռը հաստատուեց, սակայն միայն այն պայմանով, որ քարշակը չեա գնելու ժամանակ քաղաքը իրաւունք չունի իր վրայ առնելու նրա տնտեսական կառավարութիւնը այլ անպատճառ պարտաւոր լինի յանձնել կոնցեսիոներների։

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ ռուս կառավարութիւնը վճռել է պնդել ձեռք առնել միջոցներ հայ ազգաբնակութեան ապահովման համար բրդերի յարձակումներից։

—

Կ. Պոլսում հայ կաթոլիկների պատրիարք ընտրուեց Կեսարիայի Եմմանուէլեան եպիսկոպոսը։

—

Յուլիսի 14-ին, Կարս-Թիֆլիսեան երկաթուղու առաջին գնացքը ճանապարհուեց դէպի Ղարս։ Այսուհետև կանոնաւոր երթևեկութիւն կըլինի մինչև Ղարս։ Բրդէն պատրաստում է և այն գիծը, որ անցնելու է Արաքսի հովիտով մինչև Ջուլֆա։

—

Յուլիսեան շոգերի սկսելով Թիֆլիսում և նրա շրջականերում զանազան հիւանդութիւններ գլուխ են բարձրացրել։ Դուշէթի և Սգնախի գաւառներում մալիարիա (դողոց) հիւանդութիւնը այնքան սաստկացել է, որ ընդունել է էպիդէմիական բնոյթ։

—

Պարիզում հրատարակւող «Բանասեր» հնախօսական, պատմական լեզուագիտական հանդէսը, որ լոյս էր տեսնում վիմագրութեամբ, այսուհետև լոյս կըտեսնի տպագրական տառերով։

—

Վերջին շաբաթների շոգերը քաղաքացիներին անելանելի վիճակի մէջ են դրել. ջրի սակաւութիւնից փողոցները չեն ջրւում, և Թիֆլիսի գլխաւոր փողոցներից թոզի պատճառով անցնել չի լինում։ Հեռից նայողը քաղաքը տեսնում է ամբողջովին թոզի մէջ մտած։ Այժմ ի նկատի ունենալով այդ բոլորը, դիմումն է եղած ոստիկանապետի օգնականի կողմից օրական մի քանի անգամ ջրել գլխաւոր փողոցները։

—

«Տարազի» ներկայ №-ում տպագրում ենք պ Յովհաննէս Թումա-

նեանցի ընդդիմախօսականը դերասան Գալֆայեանի մասին։ Տպագրելով պ. Թումանեանցի յօդուածը, մենք միայն թոյլ ենք տալիս պաշտպանելու իրան։ Մեր դիրքը այս հարցում բոլորովին չէ-զօք է. առաջուց ասենք, որ Գալֆայեանի մասին այսքան աղմուկներ բարձրացնելն անտեղի է. սպասենք մի քիչ էլ և ամեն բան կը պարզուի։

—

Հրատարակած նոր կանոնադրութիւնից երևում է, որ հասատուում է ոսկու եւ արծաթի այն դրութիւնը, որ Ռուսիայում ընդունուած է վերջին երկու տարիներում։ Հիմնական դրամ նանաչուում է ոսկին. իւրաքանչիւր ռուբլուն գալիս է $17^{12}/_{1000}$ դոլիա զուտ ոսկի։ Ամեն մարդու թոյլ է տուում իր ոսկուց շինել դրամներ, եթէ միայն ոսկու բաւականութիւնը բառորդ ժունցից պակաս չէ։ Արծաթը ունենալով միայն օժանդակ նշանակութիւն, ենթարկուում է ոսկուն իբրեւ բնական մեծութեան։

—

Ե. և Հ. Մելիքեանի առևտրական տունը, որ Բագուում ունի նաւթային արդիւնարաններ, վերափոխուում է բաժնեհամայիս ընկերութեան։ Այս ընկերութիւնը կազմակերպուում է Ս. Պետերբուրգ-Ազովեան բանկի օժանդակութեամբ. հիմնական դրամագլուխն է 2,000,000 ր. (8,000 բաժնետէր 250 ռուբլիով), որից 1,500,000 մնում է հիմնադիրների և նրա ընտանիքի ձեռքում, իսկ 500,000 ր. կը բաժանուի ցանկացողների մէջ։

—

Նորերս կազմակերպուեց և շուտով իր գործունէութիւնը կը սկսի մի նոր անգլիական բաժնեհամայիս ընկերութիւն, որի հիմնական դրամագլուխն է 200,000 ֆ. ստերլինգ։ Այս ընկերութիւնը շահագործելու է Կովկասի այն նաւթային մասերը, որոնք գտնուում են Քութայիսի նահանգի, Օզուրգէթի գաւառում, Գուրիա և Մագելի կալուածներում։

—

Բագուից հաղորդում են որ յայտնի Բիլսկու մահից յետոյ նրա կայքը գնահատութեան ենթարկուեց, որի արժողութիւնը հասաւ մօտ 10 միլիոնի։

—

Վերջին շաբաթները քաղաքային ջրանցքները չեն կարողանում բաւարար ջուր մատակարարել ազգաբնակութեան։ Քաղաքիս վերին մասերում շատ տներ մնում են առանց ջրի 5—10 ժամուայ ընթացքում։ Այս սակաւաջրութիւնը առաջացել է Կուրի ընթացքը փոխելուց. բացի սրանից անսովոր չորութիւնը և ամբողջ ամսուայ ընթացքում անձրևներ չըգալը առիթ եղան Աւչալի աղբիւրների ցամաքման։

—

Խառն լուրեր

—

—Էննից հեռագրում են, որ պաշտօնապէս յայտարարուած է, թէ Դրէյֆուսի գործի քննութիւնը կըսկսի օգոստոսի 7-ից։

—Պարիզում սկսել են խօսել ֆրանս-գերմանական բարեկամութեան հնարաւորութեան մասին։ Վերջերս Հոհէնլոյէի Պարիզ լինելը, որ իսկապէս գնացել էր իր ատամբոյժի մօտ խորհրդակցելու, կարծում են թէ կապ ունի Վիլհելմ II-ի Ֆրանսիա ժամանելու հետ։

—Կ. Պոլսում, Վոլֆի գործակալութեան հեռագրելով, տեղի ունեցան մինիստրական երկու արտակարգ նիստեր։ Առաջին խորհրդակցութեան առարկան հայ գաղթականներին հայրենիքում բնակեցնելու հարցն էր։ Խօսք բացուեց նաև սահմանի վրայ մօտ ժամանակներումս եղած թիւրքաց անկարգութեան մասին։ Ռուսաց դեսպանը պահանջեց, որ անպատճառ քննութիւն կատարի առանձին յանձնաժողովի միջոցով։

—Սերբիայի թագաւորի հայր Միլանի դաւադրութեան մասնակցողներից 38 հոգի ձերբակալուած են։ Միլանը ցանկանալով իր դաւադիրներին խստիւ պատժել, յայտնել է իր որդուն արտասահման ճանապարհորդութիւն կատարել, որպէս զի կարողանայ ազատ կերպով պատժել իր սպանութեան փորձին մասնակցողներին։

Այլ եւ այլք

Կանանց զգեստի բարեփոխումը. Չիկագոյում գոյութիւն ունի կանանց ընկերութիւն „Oakland Goocl Healty Club“ անունով, որը նպատակ է դրել իրան՝ ծանօթացնել հասարակութեանը կանոնաւոր սնունդին և առողջութիւնը պահպանելուն վերաբերեալ հարցերի հետ։ Այդ ընկերութիւնը վճռել է հրաժարուել ամեն տեսակ կապանների, կապիչների գործածութիւնից և առհասարակ մարմնի որ և է մասի հուպ տալու համար եղած ամեն տեսակ պատկանելիքներից։ Այդ վճիռը ընդունել է տ. Արմստրոնգի առաջարկութեամբ, որը կարդաց իր հետաքրքիր հետազօտութիւնը կանանց համար վատ հետևանք ունեցող նեղ զգեստների գործածութեան մասին։ Չիկագոյի կանայք վճռել են ընդունել յունական զգեստները, որոնք թոյլ են տալիս մարմնի ամեն մասերի ազատ շարժում։

—

Կարուած սիրտ.—Երկու ամիս սրանից առաջ, 23 տարեկան մի երիտասարդ իտալացի սրով երկու հարուած էր ստացել սրտում։ Նա թէպէտ բոլորովին արիւնաքամ էր եղել, սակայն յաջողեցաւ կենդանի տանել հիւանդանոց։ „Rivista di Chirirgia լրագրի ասելով, բժիշկը վէրքի չափը ստամոքսում որոշել էր 6 սանտիմետր։ Սրտի առաջ նոյնպէս նկատուել էր երկու վէրք 1 սանտիմետր մեծութեամբ։ Դարձեալ մի քանի կարևոր կարուածքներ անելով վէրքը հետազօտելու նպատակով, անդամահատը վճռեց կարել սրտի վիրաւորուած մասերը։ Այդ անտանելի միջոցը վառաւոր հետևանքներ ունեցաւ և 49 օրից յետոյ հիւանդը կարողացաւ թողնել հիւանդանոցը։

Խմբագիր-Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
ԻՍԼԱՄ
Պատկերազարդ պատմական տեսութիւն
ԳԻՆԸ 30 կոպ.

Վաճառւում են
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
1. Դաշնակներ. . . . . 15 կ.
2. Լուռեցի Սաֆօն (պօէմա 10 կ
Դիմել՝ Тифлисъ, Центральн. книжн. торговля.

Լոյս տեսաւ
ՉԻՐՎԱՆՋԱԴԷԻ
ՔԱՕՍ
վէպը
ԳԻՆՆ Է 1 ր. 50 կոպ.
Ճանապարհածախսով 1 ր. 75 կոպ.
Գրավաճառներին զեղչ.

10 մինչև 20	օրինակի համար		15 %
20 — 30	„	„	20 %
30 — 50	„	„	25 %
50-ից աւելի			30 %

Առանց ճանապարհածախսի
Դիմել. Въ г. Баку. Типографія «АРОРЪ». 10—6

Լոյս տեսաւ
ԳԻՒՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Գիրք Դ.
Ղուկաս կաթուղիկոս
յառաջաբանով, յաւելուածներով և ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ ա. քահ. Աղանեանց (մի լուսանկար վիմատիպ կոնդակով)։
ԳԻՆՆ Է 4 ռուբլի
Առաջիկայ յուլիսի 1-ին լոյս կըտեսնի 1899 թ. Լումայ հանդիսի II գիրքը։ 3—3

Լոյս տեսաւ
Ց. Պարոնեանի երկասիրութիւններ
Ա. Ծիծաղ. հեղինակի պատկերով. գինն է 1 ր. 25 կ.
Բ. Արեւելեան ատամնաբոյժ. գինն է 50 կ. գումարով գնողին զիջումն.
Հրատարակիչ՝ Գիւտ Ա. քահ. Աղանեանց
5—5

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Յովհաննէս Թումանեանց
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ և ՊԱՏՄԻԱՆ
Փառակազմ գինը 50 կ.



ԹԻՖԼ. Հ. ՀՐԱՏ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
1899-ին լոյս են ծեսել
153. Ջեսսիկայի Առաջին Աղօթքը։ Թարգմ. Պերճ Պռօսեանի. 20 կ.
154. Երիտասարդ անգլիացի, Հաւքի. թարգ. Օր. Շ. Ց.-Ն. 05 կ.
155. Հրեայ Սբնեերը, Հաւքի. Թարգ. օր. Շ. Ց.—Ն. . . . (3 կ.
156. Սէքէոսի պատմութիւնը և Մովս. Խորենացի. Սմ. Մալխասեանց . . . . 40 կ.
Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ, կամ Tiflis (Russie) Société de la Publication dés livres arméniens. 8—7

ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Գ. Գոշեանց
ԵԶԻԴԻ ՄԿՐՏՉՈՒՆՑ ՏՈՒՆԸ
Փառակազմ գինը 50 կ.

Լոյս է տեսել
Վ. Փափազեանց
Աղբիւրի Մատենադարան
I
ՀԱՅ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎՐԱՆՆԵՐՈՒՄ
II
ԱՌԻՒԾԻ ՄԱՀԸ
Փառակազմ գինը 50 կ.

ԱՏՐՊԵՏԻ
«Ալմաստ» վէպ բարձր-հայոց կեանքից. գինն է. . . . 2 ր.
«Խեւ-Կարապետ» վէպ Հայ կաթոլիկների կեանքից . . . . 1 ր.
«Քոռ Եղիկ» վէպ շիրակ. կեանքից. . . . . 30 կ.
Ջիանոց վէպ Սազի գիւղացիների (Թրքահայերի) իրական կեանքից . . . . . 30 կ.
Ժառանգներ. Քղի գաւառի (Թրքահայերի, կեանքից. . 30 կ.
«Ղուշան» ողբերգ. օպերայի համար Թիւրքահայոց կեանքից . 1 ր.
«Սարրաֆ» ողբերգութիւն տաճկ. պատ. կեանքից . . . 30 կ.
Բհրսայի Առաքելը Թրքահայերի կեանքից . . . . . 30 կ.
Դիմել Թիֆլիսի Կենսրոնական Գրավաճառանոցին եւ Կովկասի բաղմաթերի հայ գրավաճառներին։
Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս. Въ Нахичевань н-Д, въ Типографію Бр. Аваковыхъ, որոնց կրլինի սովորական զիջումն։
25—8.

Продолжается подписка на 1899 г.
на журналъ политическій, литературно-художественный и сатирическій съ каррикатурами
„РАЗВЛЕЧЕНІЕ“.

Всѣ годовые подписчики получатъ ПРЕМІИ:

I. ХУДОЖ. АЛЬБОМЪ ВЪ КРАСКАХЪ: „ЦАРЬ ѲЕОДОРЪ ІОАННОВИЧЪ“.
Трагедія графа А. К. Толстого.
Альбомъ будетъ заключать въ себѣ 12 картинъ въ краскахъ, снятыхъ со сценъ піесы графа А. К. Толстого „Царь Ѳеодоръ Іоанновичъ“, шедшей въ Москвѣ въ „Художественно-Общественномъ театрѣ“ подъ управленіемъ К. С. Станиславскаго и В. И. Немировича-Данченко.

II. Въ память столѣтія со дня рожденія А. С. ПУШКИНА всѣмъ новымъ полугодовымъ подписчикамъ будетъ разосланъ ПУШКИНСКІЙ НОМЕРЪ, посвященный памяти поэта.

III. Полное собраніе сочиненій популярнаго юмориста А. Педро (А. П. Подурова).

Годовая цѣна журнала ШЕСТЬ РУБЛЕЙ, съ преміями СЕМЬ РУБЛЕЙ. На полгода 3 руб.

Дозв. ценз. Тифлисъ, 17-го іюля 1899 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип. К. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.